Լինում էին նաև դեպքեր, երբ շրջկենտրոնում ապրող ոչ հողատեր արհեստավորները և մանր առևտրականները, առավելապես նախկին գյուղացիներ, թեև սեփական կալվածներ չունեին, բայց արտեր էին դնում և կիսարարության տալիս, տարեկան իրենց բնաղունը ապահովելու համար։

Ամենավտանգավորն աղայական, ամիրայական-կալվածատիրական շահագործումն էր։ Կային բռնակալներ, առավելապես Դերջանում, Ջարսանջակում, Քղիի քաղաքամերձ դաշտային շրջաններում, որոնք ունեին ոչ թե կալվածներ, այլ գյուղեր։ Այդ գյուղերի բնակչությունը հողաղուրկ էր, ոչ սրտ ուներ և ոչ էլ լծկան, այդ բոլորը պատկանում էին աղային, բեկին, նույնիսկ տների սեփականության իրավունքը պատկանում էր կալվածատիրոջը, իսկ հողը մշակող, բերքը արտադրող գյուղացին պարզապես իրավազրկված մարդու էր, որ համազոր էր գերուն։

Կալվածատիրական այդ ձևն էլ բաժանվում էր երկու կարգի՝ վարձկան ծառաներ, որոնք ընտանյոր դտնվում էին աղայի տրամադրության տակ և ենթակա էին նրա բոլոր քմահաճույքներին, ապրում էին աղայի տրամադրած գետնափոր բնակարանում, աշխատում, արտադրում էին առանց որևէ վարձատրության, միայն ուտում, հագնվում և ապրում էին աղայի հաշվին։ Կինը կթվորուհի էր, երեխան գառնարած, մեկը՝ հովիվ, մյուսը՝ հողագործ, վերջապես, աղայի սեփականությունը, ենթակա վաճառքի՝ կալվածի կամ գյուղի վաճառման ժամանակ, երբ փոխանցվում էր նոր տիրոջը, որպես շարժուն ստացվածք, անբաժան մաս կազմելով անշարժ կալվածքի, որոնք անցնում էին ձեռքից-ձեռք և աշխատում նույն պայմաններում։

Երկրորդ ձևը կիսարարությունն էր, բայց ոչ նույն պայմաններով, ինչ ասվեց կիսարարության բաժնում։ Այստեղ կիսարարի իրավունքը տարբեր էր։ Աղան տալիս էր սմեն ինչ, գյուղացին իր հաշվին, իր հացով ու ջրով աշխատում, վարում, ցանում, հնձում, կալսում էր աղայի փոխադրական, միջոցներով և լծկաններով, կիսարարի իրավունքներով։ Այդ իրավունքը սահմանված էր աղայի կողմից և կախում ուներ նրա բարյացակամությունից։ Նման պարագաներում աղան ստանում էր, արտադրանքի չորս մասը, իսկ կիսարարին, որպես աշխատավարձ, տալիս էր մի մասը, այսինքն՝ աղան ի դիմաց իր կալվածի, տված սերմացուի և լծկանի, ստանում էր 80, իսկ բուն աշխատողը, արտադրողը՝ 20 տոկոսը։

Այն գյուղերում, ուր ապրում էր աղան կամ բեկը և ուր ընդհանուր գյուղի սեփականությունը իրենը չէր, այլ կային և անհատական սեփականատերեր, սրանք ունեին իրենց արտերն ու լծկանները և սեփական տնտեսությունը. իսկ աղան իր կալվածները մշակում էր մարապաների միջոցով։ Նման պարագաներում սեփականատերը պարտավոր էր իր լծկանով, իր աշխատավորով անվճար վարել նաև աղայի հողը, քաղվորներ տալ, շինարարության պարաղային բանվորներ տրամադրել, անտառից փայտ փոխադրել, ծնունդի, մահվան, թլպատման և հարսանիքի ժամանակ նվերներ տալ աղային և այլն։

Մենատնտեսության ընագավառում, բացի իրար ըրղատ, լծկան, փոխադրական միջոցներ փոխ տալուց, կային և համագործակցական ձևով հավաբարար աշխատելու դեպքեր։

Այն գյուղերում, ուր մի շարք սեփականատերերի արտերը մոտ էին իրար, և կամ մեղրև կոչվող բնակավայրերում, ուր տասնյակ ընտանիքներ էին ապրում, հաճախ համագործակցարար կատարում էին վարն ու ցանը, հունձն ու կալը, և արտադրանքը բաժանում ըստ հողատարածության և աշխատող ձեռքերի մասնակցության։

Նման շեներում կալերի ժամանակ նախ սերմացուն զատում, գրի տասնորդի, եթե հայ էին՝ եկեղեցու, իսկ եթե քուրդ՝ օջախի փիրին տրվելիք բաժինները առանձնացնելուց հետո մնացյալը բաժանում էին ըստ հողատարածության, ըստ աշխատանքին մասնակցող մարդկանց և լծկանների համեմատական թվի։ Այս ձևի համագործակցությունը կատարվում էր առավելապես քիչ տնտեսություն ունեցող փոքր շեներում և մեգրեներում կամ այն գյուղերում, ուր վարելահողի պակաս էր զգացվում։

ԳԱՇՏԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Դերսիմը, բարձրաբերձ տաքերի, անդնդախոր ձորերի, անտառածածկ լեռների, հսկայական ժայռերի երկիր էր, այդ պատճառով էլ բարձրավանդակներում ապրող գյուղացությունը տառապում էր հողի սակավությունից։

Այս գոտում վարելահողը կատարվում էր նախնական միջոցներով։

Արորները երկու տեսակի էին՝ տափարակ տրտերի արորի առատամի և ձողի միացման միջոցը, ավելի լայն էր և խորը տկոսներ էր բաց անում, իսկ մյուսը ավելի նեղ ոլոշալով, բայց ավելի տ-

մուր շինված, կոսի բակելու, ավելի փոքր և ոչ խորը ակոսներ բացելու համար էր։

Արոր կազմելու համար օգտագործվում էին՝ ծողը, առատամը, դուրը (որը ձողը կապում էր առատամին), մասը (որի վերի մասի բռնակը ծառայում էր խոփին ուղղություն և խորություն տալուն, իսկ վարի մասը՝ եռեի կողմից ձողը առատամին ամրացնելուն), փուրը (որը ամրացված էր առատամին և թույլ չէր տալիս, որ խոփը դեպի արորի բուկը երթա), գործվելը (որը սեպաձև փայտ էր՝ ձողը լծին միացնելիս փոկն ամրացնելու համար), խոփը։

Լուծը բաղկանում էր լծնձողից (լուծ), շորս սամիից, մորթից հյուսված փոկից, գործվելից (որը տափակ սեպաձև փայտ էր), սամեկապից (որը այծի մազից հյուսված կապ էր և որով սամիների երկու պլուիր կապում ու ամրացնում էին միմյանց)։

Արորի ձողի լծին միացվելիր տեղում իրարից բիչ հեռու երեք ծակ կար արորը եռ կամ առաջ տանելու համար, իսկ լծի ճիշտ կենտրոնում՝ դուրս դցված երկու տամ (տկուա), որոնցից փոքր այս կամ այն կողմ չտահի, նաև եթե լծկան եղներից մեկը նոր (խամ) էր և անպոր, փոկի մի ճյուղը ատամից դուրս էին հանում և ավելի ուժեղ եղան կողմը ձգում, մյուսի բեռը թեթևացնելու համար։

Երբ արորը լծին կապված, խոփը առատամին ամրացված էր, մնում էր առնել մառան[1] և մատուլ (իթանել) եղներին։

Վարուգան։ Հերկ։ Դերսիմում, հակառակ հողի սակավության, արտերը բաժանված էին երկու մասի՝ ցանք և հերկ։ Այս տարի ցանված արտը պարենք բաղելուց հետո հերկում էին և թողնում, որ հունդատանա մինչև հետեյալ տարվա սեպտեմբերը, երբ աշնանացանն էր սկսվում։ Փորձով հաստատված էր, որ հանդստացող արտը շատ ավելի բերք է տալիս, քան ամեն տարի ցանվողը։

Պատահում էր սակայն, որ սակավահող արտեսությունները հնարավորություն չունենալով հետևելու մի տարի ցանք, մի տարի հերկ պահելուն, երկու կամ նույնիսկ երեք տարի նույն արտը ցանում և նոր միայն մի տարի հանդստացնում էին։ Բայց մեծամասնությունը հետևում էր մի տարի ցանք, մի տարի հերկ ընդհանրացած սովորությանը։

Ջրարբի արտերը հերկում էին շորսից հինգ անդամ՝ երկու անդամ աշնանը, որ ձյունը նստի և հերկը սառչի, երկու անդամ գարնանը՝ վնասատու արմատներից և բույսերից հողը մաքրելու և ամոան կիզիչ արևի տակ հերկը հունի բերելու մեկ անդամ էլ աշնանացանին։ Երբ հերկում և ցանում էին՝ ցանելուց հետո կրկին հերկում և տափանում էին։

Ջրարբի հողերը ցանելու համար անձրևների տեղումին չէին սպասում. հերկը ջրում, հողակոտերը մանրում, ապա ցանում և տափանում էին։

Տափանը (որոշ տեղերում՝ ցաք) երկու մետր երկարությամբ մեծ ձող էր, որի վրա մորուքաձև 50—60 սմ երկարությամբ ոդիրի ճկուն շյուղերից (մոյ) հյուսված էին անում։ Ձողի երկու ծայրերից կապված պարաններ ամրացնում էին լծի ատամներին և տափնողը կանգնելով տափանի մեջտեղը, բշում էր եղները։ Տափնելու գործողությունը կատարվում էր սերմնացանից հետո և տևում այնքան, որ հերկի բոլոր ակոսները համաչափորեն գուրվեին (գուրել, գուրանցնել, հավասարեցնել)։ Ցանված արտի մակերևսին տալիս էին բիբ։ Բերությունը ոռոդումը հեշտացնելու և ջրի ընթացքը հավասար ուղղությամբ պահելու համար։

Աշնանացանը երբեմն այնքան ուժեղ արմատ և խիտ ու երկար կանաչություն էր տալիս, որ ցանքը պեոկերատանում էր, այսինքն՝ պոզում բշելու էր լինում։ Նման դեպքերում այն պոզումի վիճակին չհասցրած՝ ոչխարի հոտը ձգում էին աշնանացան պեոկերտը և արածեցնում խիտ կանաչը. անշուշտ այն ժամանակ միայն, երբ ցանքը շոր էր լինում և արմատներից պոկվելու վտանգ չկար։ Նման բան պատահում էր այն արտերի հետ, որոնք ապրված, հանդստացած և լավ հերկված էին լինում։

Պեոկերտի արտերը գարնանը կրկնապատիկ բերք էին տալիս, դրանց օրանի բարձրությունը հասնում էր մինչև մեկից-մեկուկես մետրի, իսկ հասկը արտակարգ աճում, հատիկը մեծանում էր։

Հերկելու գործողությունը անվանում էին վար. վարել. ուստի ասում էին վարուգան։ Հերկը կատարում էին մի ղույղ լծկանով։ Կարող էին նույն արտի մեջ օգտագործել մի քանի ղույղ լծկան, բայց ոչ շորսամ. այլ ամեն մի ղույղ լծկան մի տարոր էր քաշում։

Բերքատվությունը արդյունավորելու համար հաճախ փոխում էին սերմը։ Այսպես՝ մի բանի տարի ցորեն ցանված արտում հաջորդ տարին բրիլու, բուշնա, ֆիկ, ոդոյ, մեռմիմեկ (ոսպ) և կամ կորեկ էին ցանում, այսինքն՝ մեկ տարի հերկ

---

[1] Մառա՝ բեռամատի հաստությամբ, մինչև մեկուկես մետր երկայնքով ուղիղ մի մոլ փայտ, որը լավ շորացնում և ձայրին որաձայր փորը մի մեխ էին ամրացնում եղներին իթանելու համար։

պահելու ժամկետը կրճատում, գարնանը պաճաճվոր հատիկաբույսեր էին ցանում, ամառը հնձում և անմիջապես հերկում ու սեպտեմբերին նույն արտը կրկին ցանում էին։ Այս ձևով հողի արտադրողականությունը բարձրանում էր։

Ասվեց, որ ժողովրդի մեծամասնությունը օգտագործում էր հողը մեկ տարի հանգստացնելու ձևը, այդ պարագային եթե այս տարի աշնանացան էր կատարված ասենք թե Արալուխների, Հինգլղի, Ջաղջին-ձորի և Սանասորի հողամասերում, եկող տարի սրանք բոլորն էլ հերկված արտեր էին լինում, իսկ ցանքսը փոխադրվում էր Սանասուրա ձորի, Գեղին-տակի, Դիմացի, Թամքրա կամ Գեղին-գլխի և Պենտի հողամասերը։

Այս ձևի դաշտամշակությունը սահմանված էր միայն ջրարբի և գյուղի անմիջական շրջանակից դուրս ընկած արտերի նկատմամբ։ Գյուղին մոտիկ կամ անջրդի արտերում փոխանակ մի տարի հերկ, մի տարի ցանք անելու, ամեն տարի փոխում էին ցանվածքի սեռը։ Օրինակ՝ գյուղամերձ արտերում առհասարակ ցանում էին գարի, ղըղըլճա (կարծր ցորենի տեսակ), քիլուռ, ոսպ, սոյա։

Սիսեռը ցանում էին առհասարակ անջրդի արտերում։ Սա կորեկին հակոտնյա հատկություն ուներ՝ կորեկը բրնձի նման սիրում էր խոնավություն, իսկ սիսեռը՝ չորություն։

Պարարտացում (աղրել)։ Այստեղ հողը պարարտացվում էր գոմաղրով (աղր)։ Ձմեռը, երբ անասունները փակվում էին ախոռներում ու գոմերում և սկսվում էր մսուրային շրջանի կերակրումը, գոմաղրը ամեն առավոտ և խտնքին (երբ անասունների տակը ավլում և շոր խուշկի էին փռում), անասունները ջրելուց հետո, թրքփոսերից քթոցներով կրում էին կալը և գիպում այնտեղ ցրտով այրելու և մինչև գարուն փտեցնելու համար։ Գարնանն այդ աղրերը ավանակներին բեռցված, քթոցներով կրում էին արտերը, ուր արևի տակ չորանում և հերկելու ժամանակ խառնվում էին հողին։



Նկ. 1. Հարորի համալիրը 1. ձող, 2. գործեր, 3. մաս, 4. թուր, 5. կարդ, 6. բռնակ, 7 առաջամ (առնամամ), 8. փալ, 9. խոփ. (առաջինը՝ խոր վարելու՝ չորորսկի-մել, երկրորդը՝ կոոթ քակելու), 10. մասա, 11. մոտուլ, 12. փոկ։

Ավելի գործածական էր արտերը աղրելու հետևյալ ձևը։ Եթե հոդատերը առանձին ոչխարի կամ այծի հոտեր ուներ, աշնանը, երբ ոչխարը սարից փոխադրվում էր գյուղի մոտակա նստոցները (աղրլները), երեկոյան արածելու դուրս հանված հոտը քշում էին հերկերը կամ խողանները և այնտեղ հովվի շների օգնությամբ շուրջկալի տակ պահում մինչև լուսարաց։ Ոչխարների կամ այծերի հոտը ամբողջ գիշեր հանգստանում, որոճում, կտտում և միզում էր այնտեղ։ Երեք-չորս օրվա ընթացքում արտը լավագույն կերպով պարարտացվում էր։

Այն գյուղացիները, որոնք առանձին հոտեր չունեին, նույն ձևով հերթական կարգով օգտվում էին ընդհանուր հոտից, իրենց ունեցած ոչխարների թվի հաշվով տեղաբաշխելով այն։

Ընդունված կարգի համաձայն, շարաթը երկու

որ հանրային հոսի հովիվները իրավունք ունեին հոսը իրենց արտերը առնելու (եթե ունեին) և կամ հատուցման կարգով այդ երկու օրվա իրավունքը հատկացնելու բիչ անասուն ունեցող արնանությանը, նրան ևս այդ ձևի պարարտացումից չդրկելու համար։

Առավելապես ուժեղ պարարտանյութի պարունակում և հողին կենսունակություն էր տալիս, ոչխարի և ուղտի կլոակից ավելի, սեղը (շեռը)։ Նման ձևով պարարտացված արտերը սպասվածից ավելը բերը էին տալիս։

Տնամերձ արտերի պարարտացումը կատարվում էր առավելապես մոխրով և թռչնագրով։ Ամեն տան ամեն օր թոնիր և օջախ էր վառում, ամեն անանունություն ուներ իր հանանոցը։ Ամեն առավոտ տան երիտասարդ աղջիկը կամ հարսը, թոնրի և օջախի մոխիրը մաքրելիս կամ հավանոցից ծիտաբ հավաքելով կրում էր տնամերձ արտը և այնտեղ կուտակում։ Սրբ հողամասը (պարտեզ, բանջարանոց) ապատ էր, մոխրով խառն ծիտաբ տարածում էին հողամասի մակերեսին և վարում այն։ Այդ էր պատճառը, որ տնամերձ հողերը հանդուռանալու պետք չէին դնում, ավելին՝ կային ցանքարույսեր, որոնք տարին երկու բերբ էին տալիս։

Արտերի պարարտացումը կատարվում էր ապամարդկանց կողմից, նույնպես և գոմաղբը կալերը փոխադրելու պարտականություններ, վարը, ցանը, ջրատարը և տափները, իսկ տնամերձ հողերի պարարտացումը՝ երիտասարդ աղջիկների կամ հարսների կողմից, բանջարանոցի բաղհանը, ջրատարը. ինամքը ևս կանանց գործն էր։

Աերմնացան։ Սերմնացանությունը տանձին հմտություն և փորձառություն պահանջող գործ էր, ուստի ամեն որ չէր կարող սերմնացան լինել։ Սերմնացանը հասկանում և ընարում էր ցանքի պատրաստ հողը, հողի ինչ հատկություն ունենալը։

Երբ արտը պատրաստ էր ցանելու, սերմնացանը սեկից կամ կապից պատրաստված հատուկ գոդնոցը կապում, վարի փեշերի ծայրը ձախ ձեռքով բռնում, սերմը գոդնոցն էր լցնում, դեպի արևելք էր դառնում և արևածագը ողջունելուց հետո, երեք անգամ խաչակնքում էր ու մի բուռ ցորեն դեպի աջ սրսկելով ասում էր.

— Ես հոգի պաշտան սուրբին բաժիննա.
— Ես սրբին, ապրատին բաժիննա.
— Ես նիսաֆիրին (հյուր) բաժիննա.
— Ես տան օճախին պերերեթին բաժիննա.

Եվ այսպես շարունակ աջ ու ձախ մի-մի բուռ ցորեն սերմանելով, տալիս էր հավքերի, տան կենդանիների, հոգի, ջրի անունները, ու ապա բուռը լիքը ցորեն շաչում դեպի վեր և ավելացնում.

— Հոգ արեգակին, լուսնկային, լուսաստղին։ Եվ կրկին երեք անգամ խաչակնքում էր ու նոր միայն սկսում կանոնավոր և հանդարտ շարժումներով կատարել սերմումը։ Սերմնացանին հետևում էր արորը, սրան էլ՝ ապտանը։

Սերմի գտումը կատարվում էր, երբ ցորենը պոպում էր բշում (այսինքն՝ հասկը դեռ նոր էր կազմավորվում)։ Սերմնացանի ընտրությամբ տան երիտասարդ աղջիկները և հարսները գնում էին պրա և զգուշությամբ բաղհանում ցորենը ոչ թե խոտերից, այլ հատիկավոր բույսերից։ Առաջին հերթին արմատախիլ էին անում ճոր (տարեկան), վայրի ֆիկը (ֆիքի), խլորիկը և այլ հատիկավոր բույսերը, որոնք աճել էին ցորենի արտում։ Ի մասնավորի ճոն-բեսմեի դառումը դեռ արտում կատարվում էր մեծ զգուշությամբ, իսկ վերջում նույն ցորենը կալսում էին ասանձին, բարը մաղում, տեփրում և ասանձնացնում պիրիդ հյուսված և դրսից թրիթով ծեփված հատուկ ծգերի մեջ։ Այս ձևով պատրաստված սերմացու ցորենին ասում էին հոնեանմ։

Գրեթե նույն ձևով կատարվում էր մյուս հատիկների սերմացումը։

Ջրատար։ Արտերը ջրելուն ջրատար, իսկ ջրողին՝ ջրատարվոր էին ասում։ Ջրատարը կատարվում էր առավելապես արևը դեպի արևմուտք թեքվելուց հետո և շարունակվում մինչև լուսադաց, կամ արևը երկնակամարում մինչև մդրանի (նիսանի) բարձրության հասնելը։ Դերսիմի լեռնաշխարհի կլիմայական պայմանները բոլորովին տարբեր էին համեմատած դաշտային շրջանների հետ։ Լեռնաշխարհի օդը շոր էր և չնայած անառատածածկ լեռներին ու առատահոս ջրերին, անձրևները չէին տեղում և կամ շատ ավելի բիչ էին տեղում, բան դաշտային շրջաններում։ Հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսները (հունձքի և կալի ամիսներ) շոր էին դնում, անձրևները տեղում էին ապրիլից մինչև հունիսի վերջերը և հոկտեմբերից հետո, իսկ ամռան երեք ամիսը շոր էր լինում։ Ջրի սակավության պատճառով ջրում էին օրվա բոլոր ժամերին։ Ջրատարվորը հաղնում էր բրդե բուռ, նոր տրեխ, բահը ուսին հետևում ջրի ընթացքին՝ ստերը միշտ ջրի մեջ։ Ջրատարը երիտասարդ ապամարդկանց պատրաստականությունն էր։ Ցորենի արտերը ջրում էին բան պահանջի, ոչ ավելի բան

չորս տնդամ։ Ամեն պարագայի ջրարբի արտերի ոռոգումը սկսվում էր ապրիլի վերջերին և վերջանում Հունիսի սկզբին։

Ջրաբաշխման ձևը նախնական էր։ Կենտրոնական առուները համայնական էին։ Ջրի ակից մինչև գյուղի արտերի սահմանը՝ կենտրոնական առուն, փորվում էր համագործակցությամբ, ամեն տնտեսություն իր ունեցած հողատարածությանը համապատասխան աշխատող էր տալիս։ Հողատարածությունը հաշվում էին արտավարի հիման վրա, ինչ չափով աշխատոր էին տրամադրում, նույն չափով էլ ջրժամ էին ստանում։

Բոլոր գյուղացիները առավել կամ նվազ չափով, նայած իրենց հողատարածությանը, աշխատորով մասնակցում էին նոր առուների հանման, հների վերանորոգման, պենտերի (ընդ) կառուցման աշխատանքներին։ Բացառություն էին կազմում որբատեր այրիները, երիտասարդ աշխատող չունեցող ծերերը, որոնք առանց մասնակցելու առուների հանման աշխատանքներին, հավասար իրավունքներով ստանում էին ջրարժին և ջրժամ, ըստ իրենց պահանջի։

Ջրաբաշխման երեք ձև կար։ Եթե ձորը խոր չէր և դուրս գալով երկու լեռների արանքից, ուղղակի մտնում էր լեռնահովիտ։ Նման պարագային, ջուրը գեռ լեռնահովիտ չմտած, երկու լեռների հատման վայրում կառուցում էին պենտր և ջուրը բաժանում երկու մասի, այսինքն՝ երկու կենտրոնական՝ առվի, առաջինը՝ աջափնյա, երկրորդը՝ ձախափնյա ուղղությամբ։

Պենտը կառուցվում էր ժայռերի անմիջական հատման վայրում։ Իրար վրա դարսված քարերի վրա և քարերի արանքը լցնում էին մի տեսակ կավ, որը փոխանակ լուծվելու ջրի հետ, ամրանում էր ջրի շփումից։ Չնայած դրան կավ էին ասում, բայց դա ոչ թե կավ, այլ հանքաքարի փրխրուն մասերից մանրացած մոխրագույն ավազահատկի նման հող էր, որը ջրի աղդեցության և շփումի շնորհիվ պնդանում էր։

Պենտը ջրի հոսանքի ուղղությունը փոխելուն ծառայող քարաթումբն էր, որը թեև արհեստական, բայց դարերի ընթացքում պայքարում և դիմանում էր ջրի ահավոր ուժին։ Հեղեղների ժամանակ, երբ առուներն ի վիճակի չէին ընդգրկելու ջրի ամբողջ հոսանքը և լեռներից բերված քարը, ավազը, որ լցվում էր պենտի ավազանը, ջուրը ցրվեցնելուն հոսում էր պենտի քարացած պատերից դեպի ձորը։ Նման դեպքերում փոխանակ պենտի ավազանը դատարկելու, որ շատ դժվար էր, նոր պատեր էին ավելացնում պենտի պատին և մեջտեղը ազատ ջրանցք ձդում, որ առուների տարողությունից ավելացած ջուրը թափվեր ժայռերից վար։

Պենտի ջրաբաշխման երկու կենտրոնական առուներն ունեին առանձին կավառներ, որոնք գոցվում էին ոռոգման շրջանում և ջուրը մղում առուները, իսկ երբ վերջանում էր ջրառուքի շրջանը, այդ կավառների արդելակող մեծ քարը հանում և ջուրը ազատում էին կապանքներից, այդ ձևով ջուրը էրեք տեգից թափվում էր վար և կարճ տարածության վրա միախառնվում իրար, ուր և ոկրսվում էր գինդի և ջրադացի առուն։

Ոռոգման մյուս ձևը, նայած ջրի հոսանքի ուղղությանը, ուղղակի ձորից կամ ձորերից օգտվելն էր։ Կային գյուղեր, որ գտնվում էին երեք ձորի արանքում։ Նման դեպքերում ամեն մի ձոր ջրում էր իր շրջանում գտնված հողատարածությունը միշտ նույն ձևով, կենտրոնական առվի միջոցով։

Կային գյուղեր էլ, որ փոխանակ հիմնադրված լինելու ջրի հոսանքի ուղղությամբ, ջրանց գյուղի սահմանում, ընկած էին ձորից հեռու, ջրանց գյուղի աջ կամ ձախ կողմում, նայած վարելահողի հարմարագույն վայրին։ Այդ գյուղերը իրենց ջուրը ստանում էին հարևան գյուղի ընակչության համաձայնությամբ, նույն շրջանի դուդահեռ հոսող ձորի ջրից։

Այդ դարաշրջանում առաջին գյուղի պենտից բարձր, հարմարագույն վայրում կառուցում էին իրենց պենտը և ջրի մի մասը լեռան կողերի ու ժայռերի մեջ փորված առուներով, շատ բարձրից տանում իրենց հանդերը։

Կային տեղեր էլ, ուր ջրի սակավության և կամ ձորի խորության պատճառով չէին կարողանում օգտվել ուղղակի ջրի հոսանքից։ Նման գյուղերում կառուցվել էին հորեր (ջրամբար)։

Մեր նախնիները փնտրել և գտել էին հարմարագույն վայրեր, ուր ձորը անցնում էր միակտուր ապառաժների միջով, խափանել էին ջրի անցքը, ժայռաբեկորներով լցրել ձորը և հարկադրել, որ ջուրը բարձրանա այնքան, մինչև հասնի այնպիսի բարձրության, որ հնարավոր լինի ջրել դյուղի բոլոր հողերը։ Նման դարաշրջանում ճեղքել էին ժայռերի կուրծքը, տեղ-տեղ պատեր հյուսել, քարաթմբեր կառուցել և առու անցկացրել ցանկացած ուղղությամբ, ապա բաժանել այն կավառների ու տարել գանազան կողմեր։

Հորերի թմբի կառույցն այնքան լայն ու բարձր էր, այնքան հաստատուն, որ դարերի ընթացքում դիմանում էր ջրի հոսանքին։

Կային գյուղեր էլ, որ իրենց անջրդի հողերը

ոսոգելու համար օգտագործում էին ոչ թե ձորերի ջուրը, այլ բարձրից բխող ակերի, աղբյուրների ջրերը, որոնց ուղղություն էին տվել, միացրել և հասցրել մինչև այնտեղ, ուր կառուցել էին հորը։

Հորը հարմար բարձրության վրա կառուցված ջրապտան էր, որը լճակի տպավորություն էր թողնում։ Ջրամբարը ունենում էր այնքան ասրոդություն, որ բավարարեր ամբողջ շրջանի անջրդի հողերի ոսոգումը։

Հողատարածությունների ոսոգումը հերթ-կան կարգով էր կատարվում, բայց նախապատվությունը տրվում էր նրան, որի տարը ավելի շատ էր ջրի կարիք զգում, նման պարագաներում համաձայնեցվում էր հերթակաները հերթափոխի հետ։ Շատ դեպքերում նույն հանդում և նույն ուղղության վրա գտնվող մի բանի անհատների տարեի ջրատուրվորները հավասարաբար ջրում էին իրենց տարեները կամ հերկերը։ Միացնում, ջուրը կավտից տրան էին դարձնում, մեկը հսկում, ուղղություն էր տալիս ջրի հոսանքին, մյուսները, փոխանակ մեկ կավտից, երկու-երեք ուղղությամբ ջուր էին ձգում տրաի վրա և ամեն մեկը հսկում էր իր բաժնի ջրի հոսանքին, այնպես որ առաջին տրաի ոսոգումը ավարտելուց հետո անցնում էին երկրորդին, երրորդին, մինչև վերջացնելին համապատասխանության մասնակից ջրատուրվորների ոսոգելի տրաները։

Լեռնաշխարհում ջուրը համայնական էր, թեև տեղ-տեղ անհատների կողմից կառուցվում էին հուշարձան-աղբյուրներ, բայց դա լոկ անվանական բնույթ էր կրում, այսինքն կառույցը և աղբյուրը թեև կառուցողի անունն էր կրում, աղբյուրից հոսող ջուրը համայնքին էր պատկանում, եթե նույնիսկ աղբյուրը կառուցողի տան բակում և կամ անմիջում կառուցված լիներ։ Այսպես, Խնձորեկ գյուղում հնուց ի վեր հիշատակվում էր տասը հուշարձան-աղբյուր կառուցողների անուն՝ Առաքել պապան աղբյուրը (կրճատ՝ Առաքել-աղբյուր), Քարրյից աղբյուրը, Խաչից աղբյուրը, Սահակից աղբյուրը, Պեժրսյից աղբյուրը, Հայքից աղբյուրը, Պաղասյից աղբյուրը, Ազային աղբյուրը, Ֆիտեից աղբյուրը, Մայրամ աղբյուրը։

Կային և համայնական ուժերով կառուցված աղբյուրներ՝ Լիս (կամ լուս)-աղբյուր, Սրբբ-աղբյուր, Խաչ-աղբյուր, Ջոջ-աղբյուր, Դող-աղբյուր։ Սա ջերմարուժ էր, ուստի սուրբ էր համարվում։

Վերը նշված անձնանուն կրող աղբյուրների մեծամասնությունը ինքնարուխ ակեր էին, իսկ համայնական աղբյուրների մեծամասնությունը կավից շինված բորդամներով (փողրակ) սարերից բերված սառնորակ ջրեր էին։

Կամուրջները ևս համայնական էին։ Դրանք ձգվում կամ կառուցվում էին համայնքի հավաքական ուժերով, բայց և կային անհատների կողմից կառուցված և ընդհանուրի կողմից օգտագործվող կամուրջներ (Քաքրլին կամուրջը, Գրոթոլին կամուրջը, Թաթոյին կամուրջը և այլն)։

Անհատների կողմից կառուցված հուշարձան-աղբյուրների և կամուրջների վերանորոգումը կատարվում էր նույն ազգատոհմի շառավիղների կողմից։ Տոհմի կամ ազգի անհետանալու դեպքում նորոգումը կատարվում էր համայնական միջոցներով, բայց անունը պահվում էր նույնը։

Համայնական առուները կոչվում էին տեղանուններով, օրինակ, գգիրը նախիրջուղից ձայն էր տալիս.

— Լսեցեք, հա՞ լսեցեք, կիրակի արևծագին, Հորի առուն (կամ Պենտի առուն, կամ Թամերա առուն, Սանասորի առուն) հանելու գուրս եկեք։ Ամեն մարդ գիտեր, թե ուր էր գնալու և որ առվի մարրումն էր կատարելու։

Քաղ և Մաղվոր։ Գարու և ցորենի բաղը սկրսվում էր խոտհարից հետո, հունիսի վերջերին և վերջանում Ասավածածնին, երբ կատարվում էր խաղողի օրհնությունը, որը զուգադիպում էր օդոսատոի վերջերին։

Քաղն արվում էր մանգաղով։ Քաղվորները կազմված էին լինում ավյալ տան աշխատող ձեռքերից և բրդատներից (վարձկան բանվոր), որոնց հրավիրում էին, եթե բազվելիք տարածություններ ունեն, իսկ հասկը կոծնելու մոտ էր լինում։ Վարձկան բանվորները աշխատում էին արևածագից արևամուտ և ստանում օրական կես կոտ ցորեն ու երեք ժամ հաց (կերակրումը հաց էին կոչում)։

Քաղին մասնակցում էին, բացի հովիվներից, ծերերից և անչափահասներից, առանց սեռի խտրության, տան բոլոր անդամները։

Քաղվորը կառավարողը և քաղին ընթացը ավագը կոչվում էր Հունձի (հունը զանող, տարածողող, հատիտ բացող)։

Հունձին հրավիրում էր բաղվորներին գրավելու իրենց տեղերը, բոլորը կանգնած ողջունում էին արևածաղը, խաչակնքում, լսելի կամ անձայն

---

[1] Համագործակցություններ արտահայտում էին բրդատ բառով։ Բրդատ փոխառնության համատարած ձև էր։ Բրդատի գնում էին ջրատուրի, խոտհարքի, բաղի, փարի և կոմբելու, նույնիսկ տների, գոմերի կառուցման ժամանակ։ Բրդատ նշանակում էր փոխ տալ և փոխարենը ստանալ նույն ձևով, ինչպես կոթի խապար։

աղոթքներ մրմնջում և սպասում հունձի հրավերին։

Քաղվորն, ըստ իր կարողության, ընտրում էր իր տեղը ընդհանուր շարքի մեջ, որը կազմվում էր ուղղահայաց ձևով. սա մրցման պատրաստվելու մի ձև էր, որ ճրռ էր կոչվում, թեև ճրռը մանկական մրցությունների համար հորինված բառ էր։

Արևածագին քաղը սկսելու համար քաղվորը տնից դուրս էր գալիս արշալույսը դեռ չբացված։ Եթե դրսից բանվորներ կային, հավաքավայր էր նշանակվում քաղատիրոջ կալը, որտեղից բոլորը մեկնում էին հանդ, ուր գտնվում էր քաղվելիք արար։

Քաղվորը հետը տանում էր նախապես լավ սրված ու իր ձեռին վարժված ռեփական մանդաղը (որի բռնակին դրոշմված էր լինում սեփականատիրոջ նշանը), երեխաների եռոտանի ճոճը, որանից նախապես պատրաստված կեմը, մանդաղ սրելու հեսան-բարը (հեսնաբար), երկու մատնին (երկմատնի) և նույնիսկ ծերության պատճառով սար չղնացող ոտն փորձառու շանը։

Կեմը պատրաստում էին երկարածղոտ ցորենի հասկերից, որոնք մի օր առաջ արմատից հանում (ոչ թե քաղում), առվի մեջ, սալ քարերի տակ մի լավ թրջում-կակղեցնում էին, ապա հաջորդ օրվա բադի խուրձերին բավարարելու չափ կեմ անում։ Ցորենի հասկերի կողմից աչքաչափով ծղոտները առնում, երկու հավասար մասի էին բաժանում և հասկերի կողմից խաչաձև իրար միացնում ու հանգուցում (հանկստել), որով երկու մետրից ավելի խուրձկապ պատրաստ էր լինում։

Այն շրջանում, ուր ցորենի ցողունը հիսուն սանտիմետրից ավելի չէր բարձրանում (երաշտի կամ այլ պատճառներով), կեմը պատրաստում էին պիրի մոլից։ Պիրը ջրերի եզերքին աճող թուի էր, որի մոլերը (շիվ) արմատից ուղղակի վեր էին բարձրանում և մինչև մեկ մետր երկարության հասնելը մնում ուղիղ, ձկուն և անբեկելի։

Պիրի մոլը չէր կոտրվում։ Դրանից հյուսում (գործում) էին քթոցներ, ծղեր, մակրթնոցներ, շաթան և տափան, նույնպես և կեմ։ Այն օղրում, վերի ծայրերը խապի ձևով իրար միացնում և օգտագործում էին զանազան բուսեղեններ կապելու համար։

Կար և կեմ շինելու մի այլ ձև։ Շիրեմէ խոտը, որը լավ անասնակեր էր և առատությամբ, մինչև մարդահասակ բարձր աճում էր ծմակներում, քաղում, ոլորում ու երեխայի բաղուկի հաստությամբ հյուսքեր էին անում և օգտագործում որպես պարան, կեմ և այլն։

Եռոտանի ճոճը երկու մետր բարձրությամբ, երեք ձողերի վերի մասը ծածկված և երկաթալեալով իրար միացված հարմարանք էր։ Եռոտանին օգտագործում էին տիկ հարելիս (բրդերը առավելապես տկով էին հարում)։ Շրջուն ճոճը (ճոշը) ծառայում էր նույնիսկ անձրևից և արևից պատսպարվելու համար ժամանակավոր վրան կազմելուն, երբ ծառեր չկային։ Եռոտանի ճոճերով կազմված վրանների վերին մասը միայն ծածկում և չորս կողմը բաց էին թողնում։

Հեսնաբարը լավ հղկված, յուղի մեջ եռացված սև քար էր, որը ծառայում էր մանգաղ սրելուն։ Այդ գործողությունը կատարվում էր մասնագետ սրողի կողմից, հանդստի պահին։

Ներ, բայց փորձառու հովվի շան պարտականությունն էր հսկել ճոճերից կախված երեխաներին և պաշտպանել նրանց։ Նույնիսկ հացի, թանի, կերակուրի ավելացածը (որ դրված էր ճոճերի հովանու տակ) պաշտպանում էր թռնավոր սողուններից, գող աղռավներից և ամեն տեսակ վնասատուներից։

Քաղը ղեկավարող հունձին հմուտ քաղող էր լինում։ Նրա ձախ ոտքի աղդրից մինչև կոճիկները հագուստի վրայից սեկ էր կարվում, որպեսզի երբ աջ ձեռքով մանդաղին հարվածներ տար, իսկ ձախ ոտքով կառավարեր և առաջ մղեր բաղվածքը, հագուստը չմաշվեր օրանի շփումից։ Սեկապատ էր լինում նաև խուրձ կապողը, որը ծնկով սեղմում էր օրանը և գինդ կապում այն մեջտեղից։ Քաղվորները ձախ ձեռքերի մատներին անցնում էին սեկից կարված կիսաձեռնոցներ, որով պաշտպանվում էին խոպանի կտրվածքներից։

Հմուտ էր լինում նաև դեղ դնողը, որը նաև բաղվոր էր։

Երբ ամեն ինչ կարգին էր և քաղվորը պատրաստ, հունձին ձայնում էր.

— Հունձ՝ արտից, խուրձ՝ կալից, ցորենը՝ համբարից, լավաշը՝ տաշտից, հյուրը տնից անպակաս լինի։ Քաղվորն ի քա՞ղ։

Առաջին հունձին էր ձեռք տալիս օրանին և մանդաղը շարժում։ Նրա օրինակին հետևում էին քաղվորները, և աշխատանքը սկսվում էր մեծ եռանդով, մեկը մյուսից ետ չմնալու, մանավանդ նախատեսված ուղիղ գիծը պահելով առաջ ընթանալու համար, ամեն ճիգ թափում էին ամոթով չմնալու, կարգը չխանգարելու և օրվա առաջադրանքը ավելիով կատարելու։

Եվ սակայն, երբեմն պատահում էր, որ ուղիղ կորգով շարժվածներից մեկը, որպես միջակ բաղող, կենտրոնում էր տեղ դրավել, հանկարծ տրտ-

պայմանում էր մանդալի շարժումները, հնձում ոչխարածից ավելի. խոսանում արտի սիրտը և. ինչպես կոունկների յուր ժամանակ, դառնում առաջատարը, որի օրինակին հետևում էին աջ ու ձախ քաղողները, հունձին ու ծայրամասի քաղողներին միանալով նույն ուղղության վրա, հասնում էին նախատեսված հնձվայրի կենտրոնը և կանգ առնում հաղթական նման պարադաներում նույն լայվորները փոխանակ հանդստանալու, վերադառնում էին երեխա ունեցող մայրերի մոտ և աշխատում նրանց փոխարեն, մայրերին ուղարկելով կախ ճամ-ոբրանների մոտ երեխաներին կաթ տալու։

Մինչև նախաճաշը օրվա առաջին առաջադրանքը կատարված էր լինում և հունձին հրավիրում էր բազվորին նստելու հացի։ Նախաճաշի համար դաշտ էր ուղարկվում՝ մածնի սեր, կարագով խառնված թորախ, թարմ սոխ, բոդիկև թթու (թաթիկ, մոսկոր կամ ժախ), լավաշ հաց և սարից ուղղակի քաղի փայրը բերված ոչխարի մածուն և ակով թան։

Աշխատանքը շարունակվում էր նույն եռանդով. այս անգամ հունձին հրավիրում էր առավստյան վարձ բազվորներին իր կողքին տեղ դրավելու, որը լինում էր նրանց ամենամեծ վարձատրությունը և սակայն այս անգամ էլ փոխանակ կոունկի երամի, պարզվում էր տարբեր երևույթ՝ հունձին առաջնությունը ոչ որի չզիջելու համար, սկսում էր ոչ թե բազը, այլ «մանկկալ» (մանդալի հարվածներով հնձել), իրեն հաջորդողները անում էին նույնը և հնձվորների ուղիղ գիծը դնալով դառնում էր հորիզոնական, ապա՝ ղլուխ ու պոչ։ Հասնելով նշանակված տեղը, հնձվորները փոխանակ նա դառնալու, անդում կլոր մի շրջանակ գծելուց հետո, դառնում էին նա մնացողների կողմը և դեմ առ դեմ հնձելով, օգնում նրանց։

Ճաշին, կեսօրին, առհասարակ արա էին ուղարկում առանց մսի յուղալի կերակուրներ՝ բեշկ, պուլդուրե փլավ, սրոուն, խաշիլ կամ կանաչ լուրիայի տապկոց, բոդիների կամ վարունգի թթուներ, չյորելիկ, թարմ սոխ, սառը թան՝ դրանցից մեկ կամ երկու տեսակը, օրընդմեջ փոխում ճաշերը (բերնիփոխ)՝ կորկոտ տեսակ, սրմրաիկ, ճմուռ, պիշի և այլն։

Սովորաբար ամանի մեջ դրված ճաշի կեսի չափով եռացած կարագն ածում էին կերակուրի կենտրոնի փոսը, որը հոսում և ամանի եղերքին երկու մասի բարձրությամբ լիք էր կազմում։ Ուտողը սառն կամ լավաշ հացին եռանկյուն ձև էր տալիս և այն երեք մատով կերակրի մեջ ոլորելուց հետո, նույնքան էլ յուղ էր տանում բերանը։

Ճաշի հանգստից հետո հունձին կարգադրում էր, որ բաղված օրանը կեմերի վրա դրվեր և խուրձի վերածվեր, որին հետևում էր խուրձ կապողը, որը ծնկի և թեների արագ շարժումներով կապում էր խրձերը և դցում իրենց տեղերը, բաղողի կողմից համբվելու, ապա արտի կենտրոնում բացված խզանի դեղի մոտ տանելու համար։

Դիզողն իր օգնականի աջակցությամբ, իրար մոտ բերված խրձերից բոլորակաձև մի շրջան էր կազմում և խրձերի հասկերի մի մասը դնալի ներս, օրանը դնալի դուրս իրար վրա դարսելով, դեղը բարձրացնում էր մինչև գոտկատեղը, ապա նետում դեղի վրա և իր օգնականի կողմից երկմտանիով վեր բարձրացրած խուրձերը առնում և վարպ ձևերով շարում մեկը մյուսի վրա, մինչև որ դեղի վերի մասը բլրաձև նեղանում էր և փակվում վերջին խուրձի դետեղումով։

Ներքի հանդիսաը ավելի կարճ էր տևում, որին հաջորդում էր եռուն աշխատանք, մինչև արևմուտ։

Երեկոյան հացը (ճաշ) տրվում էր տանը։ Թոնրատան կենտրոնում կամ տան դռան առջև և սայվանատամ մամը դիմավորում էր բազվորներին և հրավիրում նստելու խոնչայի շուրջը, իսկ ապրը որոնում էր նրանց բեղմնավոր աշխատանքը և նստում սեղան, հրավիրելով բազվորներին բատ տարիքի բոլորվելու իր շուրջը։

Տան մեծին վերապահված էր սեղանը օրհնելու իրավունքը, որը սկսում էր խաչակնքելով և «Օրհնյալ տեր մեր Հիսուս Քրիստոս»-ով և վերջացնում «Փառք հավիտյանս, ամեն»-ով, որին հաջորդում էր երեք անգամ խաչակնքումը։ Նույնը կատարվում էր ճաշավերջին։ Մինչև պապը չօրհներ սեղանը, ոչ ոք տեղից չէր շարժվի։

Երեկոյան ճաշին ավանդական թանապուրը անխուսափելի էր, ամառ թե ձմեռ, ամեն իրիկուն, առանց թանապուրի սեղան չէր տրվում։ Թանապուրին հաջորդում էր ձվածեղ կամ կանաչեղեն։ Բեռ տապկոց յուղով և հավկիթով խորովված։

Ճաշը վերջանալուն բրդատները և վարձկան բանվորները (եթե կային) անմիջապես մեկնում էին տուն, հաջորդ օրը կրկին կալերը հավաքվելու և միասին բաղի դնալու համար։

Կալ և կալվոր։ Հնձի հետ միաժամանակ սկսվում էր կալատեղի պատրաստությունը։ Կալերն առհասարակ գտնվում էին տնամերձ հողամասերի այն անկյուններում, ուր առվով ջուր էր անցնում և սավարաձյուղ ծառեր կային։ Նույն թաղամասում ապրող տնտեսությունների կալերի տեղը

այնպես էր հարմարեցված, որ կալատեղերը լինեին համախումբ, իրար մոտիկ, նույնիսկ իրար կից։

Կալատեղը նախ ջրում, հետո վարում, քարերից, կոշտերից մաքրում, ապա տափնում էին, մակերեսը մի քիչ չորանալուց հետո կավահող էին լցնում, ջրով լուծում և երկու մատի հաստությամբ կալի մակերեսը պատում։ Այդ կավահողը շոռախ էին կոչում, որի հատկությունն այն էր, որ ջրից չէր կակղանում-փշրվում և այնքան էր կարծրանում, որ տեղատարափ անձրևների ժամանակ մարդ թե անասուն կարող էին ազատորեն մանդալ, առանց որևէ հետք թողնելու, ուստի և հնարավորություն չէր տալիս բույսերի աճման, ցորենի հատիկների փոշոտման։

Կավապատումը վերջացնելուց հետո լող քարով ամրացնում, կոփում, ամրապնդում և մի քիչ թեքություն էին տալիս կալին, որպեսզի անձրևաջուրը չլճանար ինչպես դեղերի, նույնպես և շարշի տակ։

Կալում բարդված օրանի դեզերին այնպիսի դիրք էին տալիս, որ դեզը երնելու ժամանակ բարակ մրեղը հեռուն չգնար, այլ զարնվելով դեզերին, մնար կալի եզերքին։

Կալվորը և կալի գործիքները։ Կալի ժամանակ շափահասները քաղի էին գնում։ Կալում մնում էին՝ տան ծերը, այսինքն՝ պապը, նրա փոխանորդը՝ ավագ որդին, տան մամը, իրեն փոխանորդ մեծ հարսը, վեցից-տաս տարեկան երեխաները, առավելապես աղջիկները, նույն հասակի աղանները էշով օրան էին կրում արտից կալը, իսկ փոքրահասակները և աղջիկները կամ էին քշում։ Նաև՝ լծկան եզները, նայած տնտեսության, երկուսից մինչև վեց լծկանով կամնում էին մեծ շարշերը։ Գործիքները՝ կամը և կամոտեն (սա ծայրը կեռ, երկու մետր երկայնքով մի ձող էր, որի կոճավոր մասը պարանով միացված էր կամին, իսկ կեռը անցընում էին լծին՝ կենտրոնում գտնված ատամներից կախ օղակաձև փոկին), լուծը (սամիններով, սամիկապով և փոկով), երկու-մատնին (խուրձերը շարշելու), երեք-մատնին (շարշը շրջելու), հոսելին՝ դեզը երնելու (հոսելին չորս մատ ունեցող թի էր, որով հովին էին տալիս կամնված հարդախառն հատիկը), մասան իր մոտուլով, թրքամանը (եզների թրիքը առնելու, որ շարշի մեջ չընկնի), թին (կամնված հարդը հավաքելու, երնված ցորենը թեռ անելու, շահնայի կողմից թեռը չափելիս ցորենը կոտի մեջ լցնելու, հարդը կրելիս շաթանը լցնելու), ցախավելը (կեչու թարմ ճյուղերից պատրաստված մեծ ավել, որով ինչպես ախոռների և գոմերի գոմաղբն էին հավաքում, բակերը և ծյունը ավլում, այնպես էլ կալում հարդը, մրեղն էին ավլում), ծաղիկ ավելը (ցորենի հատիկներն ավլելու), կալմաղը, քարմաղը և տեփուրը (ցորենը մաղելու, խորշուկը զատելու, քարը տեփրելու), շաթանը և քթոցը (հարդը և մրեղը մարագ կրելու), խուրջինը (այծի մաղից հյուսված կամ գործված պարկ, ցորենը կալից ամբար կրելու), բերնկալը (բարակ ծղոտից հյուսված սակառ, որը կալող եզների բերանն էին անցընում և լարանով երկու կողմից հղջյուրներին կապում, որպեսզի կամված հացահատիկը չուտեր։ Բերնկալին տեղ-տեղ էլ թունչկալ կամ փընչքտե էին ասում)։

Փոխադրական միջոցի պակասի հետևանքով լաղը, օրան կրելը և կամնելը արվում էր միաժամանակ, հնձված օրանը հազիվ մի քանի օր դեզերի մեջ ձգում էին արևի տակ չորանալու, ապա փոխադրում էին կալերը, ուր և կազմում էին դեզերը։ Օրանը կրում էին առավելապես էշերով, մի էշի բեռ օրանը տասը խուրձ էր։ Օրանը բեռցնողը տան ամենաերիտասարդ և ամենաուժեղ տղամարդն էր լինում։ Պարանով լավ կապում էին առաջին չորս խուրձը և փոքր միջոց թողնելուց հետո, նույն պարանի շարունակությանը և առաջին չորս խուրձերին զուգահեռ կապում երկրորդ չորս խուրձը, որով դառնում էր ութ խրձից երկու մասի բաժանված մի իշաբեռ։ Օրան բեռնողը (որը նույն ինքը խուրձ կապողը և բեռ պատրաստողն էր), ութը խուրձը միաժամանակ բարձրացնում էր սեկապատ իր աջ ծնկին, ուր մի ակնթարթ հանգրստանում, ապա ծնկի վրայից նետում էր այն էշի շալակը, որով էշի աջ ու ձախ կողմերում չորսական խուրձ էր զետեղվում, հասկերը դեպի ետ, ապա երկու խուրձ ևս ավելացնում էր կապվածին, կրկին նոր պարանով թե առաջվան, թե վերջին խուրձերը միատեղ կապում էր էշի վզի տակից և առջևի ոտքերի մոտից պարանը սեղմելով, բերում աջ կողմի չորս խուրձի կապին անցընում և պոչատակից դեպի ձախ կողմի խուրձերը պարանը երկարելով, մի լավ ամրացնում, և տասը խուրձով բեռնավորված ավանակը մյուսների հետ ճամփա էր հանվում դեպի կալ, բեռնավորված ականջներից մինչև պոչը երկարող օրանով։

Նախքան ցորենի կալսումը, կալսած էին լինում ոսոլի, պոյի, գարու, քուշնայի, ֆիկի և քիլուռի բերքերը, որոնց մանը թե միջակ հարդը առանձին մարագներում էին զետեղում, որովհետև անասունները ավելի ախորժակով էին ուտում դարնանացանի փափուկ հարդը, քան ցորենինը։

Եթե արտերում դեղերը կազմվում էին առանց



Նկ. 2. Ճանրի ու կալսոցի գործիքներ։ 1. տափան, 2. լոդ (կալատեղը և կուսրը հարթելու համար), 3. թակ (բրդեղեն լմելու), 4. թակ (հացուստ թակելու), 5. աղատ, 6. կամ—ա. կամնտե, 7. թի (փայտե), 8. թակիչ (կտուրի), 9. տրմրդ, 10. թիակ, 11. երկումատնի (փայտե, միակտուր), 12. իրեգմատնի (փայտե, միակտուր), 13. հոսելի (փայտե)։

համրանքի, ապա կալելում քով-քովի բարձրացող դեզերի խրձերը համրանքով էին՝ մեկից մինչև չորս բարդնոց դեզեր կային (բարդը առհասարակ կազմվում էր երեսուն խրձից, բայց կային մի քանի գյուղեր, ուր բարդը հաշվվում էր 32 խուրձ)։ Խուրձն էլ ուներ իր չափական կազմը, մի գիրկ օրանը մի խուրձ էր (գիրկ հաշվում էին երկու թեվերն ընդգրկած տարողությունը), որը համազոր էր մեկուկես մետր-կեմի (կաղնեծառը) սեղմած օրանին, մոտավորապես 50 սմ տրամագծով։ Նայած տնտեսությանը և լծկանների թվին, շարքը ընդգրկում էր 10—15 բարդ, այսինքն՝ ամեն մի շարք երեքից մինչև չորս հարյուր հիսուն խուրձ էր լինում։

Դեզերից խրձերը կրում էին կալամեջ, մանդաղներով կտրում կեմերը, երկումատանիով խրձերը շարքում միմյանց վրա և կլոր ձև տալիս, որի բարձրությունը հասնում էր մինչև գոտկատեղ, ապա լծկանները առանց կամը քշում էին շարքը տրորելու (նստեցնել), իսկ կամը լծին կապելուց հետո առաջին մի քանի շրջանները կատարվում էին մեծահասակների կողմից, մինչև որ շարքը նստում էր և հնարավորություն տալիս երեխաներին քշելու կամը։

Մեկից մինչև երեք օր կամնվող շարքեր կային, նայած լծկանների թվին և շարքի մեծությանը։ Առաջին շարքը կամնելուց հետո թեղ էին կազմում, իսկ երկրորդ կալում (չունեցողները՝ նույն կալի մի մասում) պատրաստում էին երկրորդ շարքը և այսպես շարունակաբար՝ շարքին հաջորդում էր թեղը, թեղին՝ շարքը։ Օրը երկու անգամ կալը շրջում էին՝ կեսօրվա հանգստին (ճաշ), երեկոյան լծկաններն արձակելուց հետո և կամ առավոտը շատ կանուխ՝ կամերը լծվելուց առաջ։ Շարքի շրջումը կատարվում էր երկումատնիով կամ երեքմատնիով։ Դա արվում էր շմանրված օրանը հարդի տակից հանելու և կամի ատամների տակ ձգելու համար։ Անկախ դրանից, կալվորներից մեկը երկումատնին ձեռքին օրնիբուն շրջում էր շարքի շուրջը և օրանը նետում դեպի կամերը։ Թեղի երկարությունը, որ ձգված էր լինում արևմուտքից արևելք, հասնում էր մինչև հինգ մետրի, իսկ բարձրությունը՝ մեկուկեսից-երկու մետրի, նայած կամնված ծրանի չափին։ Թեղին արվում էր այնպիսի ձև, որ երեկոյան կարողանան օգտվել արևմտյան քամիներից, որը առհասարակ փչում էր ամռանը։ Եթե թեղի երկարությունը հասնում էր մինչև հինգ մետր, այն հոսելիով երնում էին երեքից-չորս հոգով։

Երբ թեղը երնված, ցորենը հարդից զատված, թեղը շահնայի կողմից չավելի արված և պեյրեն (պեհրե-բահրա) առնված էր, ձեռնարկվում էր ցորենը կալից տուն փոխադրելու։

Բազմանդամ ընտանիքներն ունեին հատուկ ամբար, որը տան քիլարին կից մի սենյակ էր, տանիքում բացված ձագարաձև անցքով, վերի մասը կլոր կամ քառակուսի և լայն, վարը՝ ավելի նեղ։ Կալից կրված ցորենը տանիքից լցնում էին ձագարի մեջ, որը հոսում էր անմիջապես, այդպիսով, խուսափում էին ցորենը խուրձերի կամ ծղերի մեջ պահելու դժվարությունից։

Փոքր տնտեսությունները ցորենը ամբարում էին կրակարանի մի անկյունում, մինչև որ կալերը վերջանալուն բնաղունի պատրաստություն տեսնվեր և աղունը տեղավորվեր փայտե ամբարների մեջ։

Ցորենը տուն փոխադրելուց հետո ձեռնարկում էին հարդի փոխադրությունը։ Հարդ կրելը տղամարդկանց հատուկ գործն էր։ Աղջիկները կամ հարսները օգնում էին հարդը մեծ չաթանների մեջ լցնելու և չաթանը բարձրացնելու կրողի շալակը (կռնակ)։ Կրողը պարանից հյուսված և չաթանին ամրացված թևատեղիները անցկացնում էր ուսերին և վերցնողների օգնությամբ հսկայական չաթանը տանում դեպի մարագի տանիքը, ուր պարպում էր տանիքում բացված երդիկից (հերթիք) վար։ Հարդը բաժանում էին երկու մասի, առաջինը՝ շատ մանրը, մրեղ էր կոչվում, կրում և գետնեղում էին մարագի մի մասում, որը անջատված էր պատով և որն իր կարգին տանիքում ուներ իր երդիկը, մնացյալը սովորական հարդ էր, որը լցնում էին իրար վրա։ Մինչև ցորենը և հարդը տուն կամ մարագ կրելը չավարտվեր, տան անդամներից ոչ ոք չէր քնում։

Կալը հարդից և ցորենից ազատելուց հետո քեսը (ցորենի այն հատիկները, որ լավ մաքրված չէին) կալի մեկ անկյունում տեղավորում և ձեռնարկում էին նոր շարքի պատրաստությունը հաջորդ առավոտ վաղ կամնումը շարունակելու համար։ Եվ այդպես մինչև կալի ավարտը։

Աճուրդ։ Պետությունը աճուրդով ծախում էր գյուղերի բերքերից գանձվելիք տուրքերը։ Սրան աշար (աճուրդ) էին ասում։ Աշարը գյուղի արտադրությունից գանձվելիք տուրքի հավաքական գանձման իրավունքը պետությունից գնորդին փոխանցվելու ձևն էր։ Աշարի գնումը կատարվում էր հրապարակային աճուրդով, որին մասնակցում էին բեկերը, աղաները, գրամատեր-կալվածատերերը և ամիրաները։ Նախնական շրջանում աշարին մասնակցում էին առավելապես թուրք բեկե-

լր. ավելի ուշ մասնակցեցին նաև ամիրաներն ու Հեծանարուստ հայերը, շատ սահմանափակ թվով տան բուրգ ագաները կամ բեկերը։ Սրանք նախապես համաձայնելով այսինչ կամ այսինչ գյուղի վաճառքի գնի և առնող բեկի հետ, կազմում էին լոլոր գյուղերի բերքի տարեկան արժեքի յուցակ և բաց ալեմ մասնակցում աճուրդին։ Աշարը թուրք բեկերի համար գյուղացիությանը շահագործելու

Աշար առնող բեկն անձամբ չէր գնում գյուղերը, այլ ուղարկում էր իր վստահությունը վայելող շահնային և նրա օգնականներին, որոնք սանձարձակորեն գործում էին առանձնաշնորհյալ բեկերի անունով և կատարելապես կողոպտում գյուղացիությանը։

Առանց շահնայի թույլտվության հնարավոր չէր ցանովի անասնակերի խոտհարք կատարել և խո-



1. Գ. Ս. Լուծ—ա. սամիներ, բանկաճ, 2. սալ (սայլ, սեյ)—գ. խաչփայտ (գլխրտե), դ. ծրեղ, ե. պտան, զ. նետ, է. արդա, ը. տան, թ. սամեկապ, ժ. թուր, ժա. դեց, ժբ. գոտի, ժգ. դարձ

լավագույն միջոցն էր, որ հովանավորվում էր պետության կողմից։

Աշար գնողը կոչվում էր մյուլթեզիմ, որը օրինականորեն ներկայացնում էր օրվա իշխանությունը և վայելում նրա հոգատարությունը՝ խոտհարքից սկսյալ մինչև կալավարաբ։ Մյուլթեզիմը կամ նրա նշանակած շահնաները ու գործակալները աճուրդով գնված գյուղերի բնակչության տերն ու սիրականն էին։

Աճուրդին մասնակցելը կրում էր ձևական բնույթ։ Նախապես համաձայնած աշարաքները արդեն գյուղերը բաժանել էին իրար մեջ և չէին մրցում մեկ-մեկու հետ, այնպես որ շատ չնչին գներով ձեռք բերված աշարը ի վնաս պետական սնդուկի, մեծամեծ շահեր էր ապահովում աշարաքներին։

բոմները արտից որևէ տեղ փոխադրել, նույնիսկ գիրել։ Հնձված ֆիկը, քուշնան, պոյը, առվույտը, կորնգանը խուրձերի կամ խորոմների վերածված մնում էր իր տեղում, մինչև որ շահնան իր գործակալներով գնար համրելու դրանք։ Շահնային վերապահված էր խորոմները բնարելու և կշռելու իրավունքը՝ չորսից մեկ, վեցից կամ ութից մեկ համրում, կշռում և խորոմների կշեռքի միջին հաշիվը հանում ու բաց այնմ գնահատում էին։ Անասնակերի ութ խորոմից մեկն առնելու իրավունք ունեցող շահնան հրաժարվում էր այն ստանալուց և պարտադրում, որ կշեռքի հոխանների համապատասխան դրամով կամ ցորենով վճարեն սակը, այսինքն՝ իր ստանալիք անասնակերը վաճառում էր արտադրողին և փոխարժեքը գանձում կալին։

8—61

Պարապան տարբերվում էր, երբ հատիկավոր անասնակերը որպես խոտ չէին հնձում, այլ թողնում էին, որ հասունանար և կալսվեր։ Այդ դեպքում չափում էին ցորենի նման և ստանում իրենց հասանելիքը ուրիշ մեկ։

Անպաշտպան գյուղացին պարտավոր էր խոտհարքի սկզբից մինչև կալի վերջը կերակրել ոչ միայն շահնային, այլև նրա օգնականներին։ Գյուղի ամենալավ սենյակը հատկացվում էր նրանց՝ ռեսի կարգադրությամբ, գզիրը օրը երեք ժամ ուտելիք էր բերում ձրիակերներին՝ առավոտը սեր, մեղր, կարագ և մածուն, կեսօրին՝ խորոված ճտեր, փլաֆ, խոշապ և մածուն, երեկոյան՝ ձվածեղ, զանազան տապկոցներ և թանապուր։ Ճաշը մատակարարվում էր հերթական կարգով, ըստ ցուցակի, բացառություն էին կազմում այրիները և աշխատող ձեռք չունեցող ծերունիները։

Ամեն ընտանիք իր կարգին աշխատում էր լավագույն կերակուրներ ուղարկել «հյուրերին», որպեսզի շահնան լավ աչքով նայեր, երբ կարգը գար իրենց թեմը չափելուն։ Թեև հայ ժողովրդի հյուրասիրությունը առակի կարգ անցած ավանդական հին սովորություն էր, բայց շահնային հյուրասիրելը պարտադիր բան էր, այնպես որ, երբ մի օր առաջ գզիրը իմաց էր տալիս տանտիկնոջը, թե վաղը «ղոնախներին» հյուրասիրելու կարգը ձերն է, տանտիկինը փոխանակ ուրախանալու, որ հյուրասիրության կարգը իրենց օջախին է հասել, ամեն ժամ կերակուրների ափսեն կամ ամանները գզրին հանձնելիս բղավում էր.

Նկ. 4. Կոտ (քոտ)—12 հոխա տարողություն ունեցող արմտիքի չափ, որով կալերի ցորենը չափում են։

— Գրողս ուտեն, տար թող զխտին, շան պես լակեն։

Անկախ հերթական հյուրասիրությունից, շահնան գզրի միջոցով հաճախ լուր էր ուղարկում գյուղի ավելի աչքի ընկնող տանտիրոջը, թե վաղուց է խորոված չի կերել և պահանջում է պիրան կախել թոնիրը և կամ սաճղավուրմասի պատրաստել։ Տանտերը հարկադրաբար կատարում էր շահնայի պահանջը՝ վատամարդ չլինելու համար օրվա իշխանավորի մոտ։

Իսկ երբ վերջանում էր բերքահավաքը և կալսրվում ամենավերջին հատիկը՝ կորեկը, շահնան կարգադրում էր գյուղացիներին իրենց փոխադրական միջոցներով տեղափոխել մինչ այդ կալերից հավաքված բահրան, որը ամբարված էր լինում շահնայի կողմից կնքված հատուկ սենյակներում, պաշտպանությունն էլ վստահված շահնայի հավատարիմ ղորձիներին։

Աշնան աշխատանքի եռուն այդ օրերին անտեր ու անպաշտպան գյուղացիությունը հարկադրված էր իր խուրջիններով և էշերով ձրիաբար գյուղից քաղաք կամ շրջկենտրոն փոխադրել մյուլթեզիմի հարստությունը, որն օրենքի անունով կողոպտված էր կառավարությունից և գյուղացիությունից։

Փոխադրված հացահատիկը բեկերի կողմից պահվում էր հատուկ ամբարներում, որպեսզի ելաշտի կամ սովի ժամանակ առասպելական գներով վաճառվեր այն արտադրող գյուղացիությանը։



Նկ. 5. Թեմի (ցորենի չեղ) կնիք։

Ի պատիվ խնձորեկցիների, դվնիկցիների (զուտ հայ), բագառիճցիների և վիժանցիների պետք է ասել, թե բահրայի ձրի փոխադրության դեմ ընդվզած են և չեն ենթարկված շահնաների կարգադրությանը։ Այդ առթիվ թեև մեծ կռիվներ են տեղի ունեցել, բայց հնարավոր չի եղել իրենց կամքը պարտադրել ըմբոստ գյուղերի այդ ժողո-

վրրդին, որոնք իրենց թիկունքը տված ապստամբ և ինքնիշխան Դերսիմին, տեղ-տեղ ցույց էին տալիս առնական կեցվածք ընդդեմ ամեն կարգի բռնակալների։

Դարի. Հերկը, հողերի փիրեցումն ու պարարտացումը կատարվում էր նույն ձևով, ինչ որ ցորենինը։ Դարին ցանում էին աշնանը, բայց առավելապես գարնանը։ Աշնանացանն ավելի բարձր ցողուններ էր ունենում և ավելի մեծ հասկեր, քան գարնանացանը։ Դարին ավելի շուտ էր հասունանում, քան ցորենը։

Դարու բաղն ու կամնելը կատարվում էր ցորենից առաջ։ Չնայած գարին ավելի էր դիմանում երաշտին, քան ցորենը, գյուղացին նախապատվությունն էր տալիս գարի ցանել ջրարբի, քան թե անջրդի արտերում, որովհետև ջրարբի գարին ավելի մեծ հասկեր և դիրուկ մեծ հատիկներ էր տալիս։

Ինչպես ցորենի, նույնպես և գարու ցողունը և տերևները բանի դեմ դեղնած չէին, կոչվում էին ցողուն, իսկ հասկը, երբ խանձարուրի մեջ պարուրված ու դեմ դուրս չէր եկած կանաչ պատյանից, կոչվում էր պոդում։ Պոդումը նույն ինքը վաղվա հասկն էր։ Երբ ասում էին ցորենը կամ գարին պոդում է տվել, պոդում է քաշել, հասկացվում էր, թե այն կազմավորվում է, բայց կանաչ պոդի մեջ է։

Ցորենը գարուց գտնադանվում էր իր երկար և ցից հասկերով (գրչչրդ)։

Ջրարբի արտերում ցանված գարին ջրում էին երեքից-չորս անգամ, տեղ-տեղ էլ՝ հինգ, նայած արտի պտղաբերությանը։ Կոթերում (խոզան) ցանված գարին և ցորենը շատ ավելի առատ բերք էին տալիս, քան գործածված հողերում։ Գարին չաղացված վիճակում պահում էին խարաններում, խուրձերում, ծղերում և հողից պատրաստված մեծ կարասներում։

Կորեկ։ Կորեկը իր մշակության պայմաններով ավելի մոտ էր բրնձին, քան որևէ այլ հացահատիկի։ Այն սնվում էր ջրով, ցանում էին կամ մրշտական հաղարներում (ճմուտ, թաց հողեր) և կամ ջրառատ արտերում, մայիսի վերջերին, հնձում սեպտեմբերի կեսերին։

Դերսիմի կորեկը բազմաճյուղ, ծուռավոր արդասաբեր բույս էր. մեկ ցողունի ճյուղերի վրա կարելի էր համրել մինչև հինգհարյուր հատիկ։ Ցողունի բարձրությունը հասնում էր 60 սմ, բայց ծանրաբեռնված լինելով բազմաթիվ ճյուղերով և անհամար հատիկներով, գլուխը հակված էր մնում գետի արար։ Հատիկը գնդասեղի կլոր ծայրից քիչ ավելի մեծ, ոսկեգույն սրսռան գնդիկ էր, կեղևը շատ կարծր, միջուկը՝ սպիտակ։ Այն կարելի չէր բռնել ափի մեջ, բանի որ սլելուն էր ու սահում էր մարդու ափից սնդիկի պես։

Կորեկը քաղում էին մանգաղով և խուրձը կապում պիքի կամ խոտից հյուսված կեմով։ Կալսում էին ցորենից հետո։ Կորեկի կալսումն ավելի հեշտ էր, քան ցորենինը, իսկ թեղի երնումը՝ համանման։ Կորեկը թեև ջրածին հունդ էր, ավելի շուտ՝ կորեկի հոգին ջուրն էր, բայց քաղելուց հետո ջրից վախենում էր։ Թրջված կորեկի հատիկը տժկում և փչանում էր, այնպես որ գյուղացին աշապարում էր հոկտեմբերի անձրևները դեռ չսկսված կորեկը կամնել ու հատիկը տուն փոխադրել կորստից փրկելու համար։

Լազուր (Եգիպտացորեն)։ Լազուրի մշակումը ընդհանրացած չէր, ցանում էին շատ սահմանափակ չափով։ Եգիպտացորենի ցանքը տարբերվում էր մյուս մշակույթների ցանքից՝ այն կատարվում էր ոչ թե սերմը աջ ու ձախ շաղ տալով, այլ տընկման ձևով, ավելի նոսր և համեմատաբար հեռու իրարից։ Քաղհանը և հողի փխրեցումը կատարվում էր երկուսից-երեք անգամ, այնքան էլ ոռոդման կարիք չէր դրվում, թեև ոռոգում էին ցորենի նման։

Եգիպտացորենի բոչանները լավ դեղնելուց (հասունանալ) հետո պատում էին ցողունից և արևի տակ չորացնելով կամնելու փոխարեն փայտով ծեծում և այդ ձևով անջատում հատիկները, իսկ ցողունները վառում էին։

Քիլուռ (ոլոռն)։ Լեռնաշխարհի բնակչության ընդեղենների գործածության ասպարեզում առաջին տեղն էր գրավում պաճավորների ընտանիքին պատկանող, շատ բեղմնավոր և սննդարար այս ընդեղենը, որը մշակվում էր մեծ բանակությամբ։ Այն ցանում էին արդավանդ հողերում և ջրարբի արտերում։ Արտերի հերկումը գրեթե բոլոր սերմնահատիկների համար միևնույն ձևով էր կատարվում։ Ոլոռը գարնանացան էր, ցանում էին տարրիի վերջերին կամ մայիսի առաջին օրերին, աճում էր շատ արագ և բարձրանում մինչև մարդահասակ, բայց ցողունը հաղիվ 40—50 սմ. բարձրացած, պառկում էր տերևների ծանրությունից։

Ոլոռնի սերմանումը ցորենի նման խիտ էր արվում, բայց ցողունի հաստությունը, ճյուղավորումը, պառկած վիճակը, մեկը մյուսին փաթաթվելը հնարավորություն չէր տալիս, որ ջրտուբվորը կամ բաղհանողը մտնի արտի մեջ և ետ ու առաջ շարժվի։

Կորեկից հետո առաջին բույսն էր, որի արդասավորումը և բերքատվությունը կապված էր ջրելու

հետ՝ որքան շատ ջրվեր, այնքան առատ բերք էր տալիս։ Ամեն ցողունի վրա կարելի էր հաշվել 15—20 պաճ, իսկ ամեն պաճի մեջ՝ երեքից ութ հատիկ։

Քիլուոր քաղում էին մանգաղով, երբ պաճերը դեղնած ու միջի հատիկները լավ ամրացած էին լինում։ Այն հնարավոր չէր խուրձ կապել, ուստի վերածում էին խորոմների, առանց որևէ կապի։ Քիլուոն էլ կամնում էին ցորենի նման՝ շարշով, բայց ավելի շուտ մանրվում էր կամի սրածայր քարատամների տակ։

Ոլոռը կամնելուց, թեղը երնելուց և հատիկը հարդից զատելուց հետո, ինչպես ցորենը կամ զարին, չափել էին տալիս շահնայի կողմից և տասնորդը տալուց հետո մնացյալ հատիկը փոխադրում տուն։

Կային տնտեսություններ, որոնց արտերը արգասաբեր և ջրարբի էին, ուստի ցորենից, գարուց ավելի նախապատվություն էին տալիս քիլուոի արտադրությանը, որովհետև եռապատիկ շահաբեր էր, քիլուոի փոխանակությամբ լրիվ կերպով կարող էին ապահովել իրենց հացահատիկի պահանջը։

Մալ լեռան փեշերում, Մամիկ իշխանի կալվածներում և առհասարակ լեռնային ծմակներում դեռ աճում էր վայրի քիլուոի մի տեսակ, որի հաճիկները թեև փոքր, բայց ավելի քաղցր էին։ Սրանից կարելի է ենթադրել, թե մեր նախնիները վայրի քիլուոի հատիկները մշակել և ընտանեցրել են, հասցնելով այն այսօրվա վիճակին։

Մեռնիմեկ (ոսպ)։ Մեռնիմեկը պատկանում էր պաճավոր մշակույթների ընտանիքին և դասվում ընդեղենների շարքը։ Այն ցանում են ապրիլի կեսերին, հնձում հունիսի վերջերին։ Ցողունը շատ նուրբ էր, փոքր ճնշումից կոտրվում կամ պոկվում էր։ Հազիվ 30 սմ բարձրություն ունեցող այս հատիկավոր բույսը քաղում, ավելի ճիշտ արմատահանում էին ձեռքով, փոխադրում կալ քթոցներով կամ խուրջիններով բեռնված ավանակների կռնակին։ Ոսպը քիլուոից քիչ էին ջրում, միջին հաշվով ամիսը երեք անգամ, մինչև պաճերի հասունանալը և դեղնելը։

Ֆիկ (ֆիթ)։ Ֆիկը պատկանում էր պաճավորների ընտանիքին և համացեղակից էր քիլուոին՝ մշակության, ջրելու, քաղելու, կալսելու միևնույն պայմաններով։ Կանաչ զանգվածը քաղում և խորոմի էին վերածում պաճերի միջի հատիկները գեռ լավ չկազմավորված, «ծաղիկը քթեն», ասում էին գյուղացիները։ Ֆիկի ցողունները քիլուոի նման իրար կճուճված ընդհանուր զանգված էին կազմում։ Ֆիկն էլ քիլուոի նման սիրում էր արգասաբեր հող և առատ ջուր, մանավանդ եթե կանաչ վիճակում քաղելու համար էր ցանված։ Շարաթը մեկ, երբեմն երկու անգամ ջրում էին, որ թե լավ ճյուղավորվեր, հասակ նետեր, թե առատ ծաղիկ տար։

Ֆիկի խորոմները պահում էին ծածկի տակ, ավելի ճիշտ՝ մարագի պատվավոր անկյունում, որ չթրջվեն։

Ֆիկի այն մասը, որ հատկացված էր լինում հատիկային կերի, քաղում էին հունիսի վերջերին, երբ արդեն պաճերի միջի հատիկները լավ ուռճացած, ամրացած և քաղելու վիճակի էին հասած։ Ֆիկն էլ քիլուոի նման քաղում էին մանգաղով, կալսում և երնում նույն ձևով։

Քուշնա։ Սա բացառաբար հատիկային անասնակեր էր, թեև պատկանում էր պաճավորների ընտանիքին, բայց կապ չուներ ընդեղենների հետ։ Քուշնա ցանվելիք արտերի հողը նախապես պարարտացվում էր։ Քուշնան որպես կանաչ զանգված չէին քաղում, այլ թողնում էին, որ հասունանա և հատիկավորվի։ Արմատները և ցողունը ավելի հաստ էին, քան ոսպինը, բայց աճումը սահմանափակ էր, լավագույն պարագաներում ցողունի բարձրությունը հասնում էր 50 սմ։

Քուշնայի ցանքը կատարվում էր ապրիլի կեսերին, իսկ քաղը՝ հունիսի վերջերին կամ հուլիսի առաջին օրերին։ Արագ աճող բույս էր, բայց աճը փոխանակ հասակին տալու, տալիս էր լայնքին, արմատից քիչ վեր աճող ճյուղերը բարձրանում էին կողք-կողքի և բույսին տալիս հովանոցաձև զանգվածի տեսք, որի պաճերը կախվում էին ճյուղերից։

Քուշնայի հատիկները զանազանվում էին ֆիկի հատիկներից իրենց կորանկյուն ձևով, հատիկը՝ կարծր, գույնը՝ բաց-կանաչին տվող մոխրագույն։ Ցանելուց մի քանի օր հետո ծիլերը զուրս էին ցցվում հողից։ Ելելուց 15 օր հետո ոռոգում էին և այսպես շարունակաբար ամեն շաբաթ, մինչև հասունանալը։ Քուշնան քաղում, ավելի ճիշտ արմատահան էին անում ձեռքով։ Քաղելուց մի քանի օր առաջ արար ջրում էին, որ հողը կակղանար և հեշտությամբ քաղվեր։

Պոյ։ Սա շատերին անծանոթ, պաճավորների ընտանիքին պատկանող հատիկային անասնակեր էր։ Ցանում էին քուշնայի նման, սակայն պաճերը բոլորովին տարբեր էին՝ ավելի նեղ ու երկար և ավելի խիտ հատիկներով, որոնք թեև ավելի կարծր, բայց նմանվում էին քուշնայի հաճիկնե-

բին, ամեն մի պաճի մեջ աճում էր 12—15 հատ։ Բաղում և կայսում էին բուշնայի նման։

Ցիթատու շուշմայի (սուսամ) սերմանումն սկսվում էր ապրիլի 15-ին։ Սա բծախնդիր էր հողի որակի նկատմամբ, չէր սիրում կավահող, անհրաժեշտ էր պարարտացված արդասաբեր հող, ուր աճում էր մեկուկեսից մինչև երկու արշին բարձրությամբ։

Շուշմայի ցողունը հատ և բոռակուսի էր, սերմանում էին շատ ցանցառ, որպեսզի ցողունի շուրջ կողմից աճող ճյուղերը իրար չխանգարեին։

Ցողունի ներքին մասը փայտանման էր, կեղևը շատ փափուկ։ Սա էլ կարելի էր դասել պաճավորների բնատնիրին, բնդեղենների շարքը, սակայն շուշմայի պաճերը բիլուռի կամ ֆիկի պաճերին չէին նմանվում, ավելի մոտիկ էին կորեկի մաշկավոր պարկիկներին։

Շուշման բաղում էին արմատահան անելով. չէին կամենում, այլ խուրձերը կայմերձ հարթակում փռում էին վալաների (կտավից կարված սավան) վրա և թողնում, որ մի լավ չորանան արևի տակ։

Արևի ազդեցությամբ պաճերը, ավելի ուշ՝ հատիկներ պարունակող մաշկաղարկը ճաքում էր, և հատիկները անջատվում էին մաշկից ու երբ վերցնում էին ցողունը և թափ տալիս, հատիկները դիզվում էին վալաների վրա, որով հատիկները դերձ էին մնում հողոտվելու վտանգից։ Վալաներում հավաքված հատիկը կրում էին տուն և լցնում կոլմակների (տակառի մի ձևը), ծեփված ծղերի, կարասների կամ խուրձերի մեջ, նայած բերքի բանակին։

Կտավատ (բթան, բլանհատ, բեթեն-թոխսումի)։ Հին անցյալից հայտնի յուղահատիկների բնատնիրին պատկանող այս բույսի մշակությունը համանման էր իր ցեղակիցների մշակման պայմաններին։ Սերմանումը կատարվում էր նոսր (ցանցառ), որպեսզի ճյուղավորման ժամանակ իրար չխանգարեն։ Կտավատի հունդը շուշմայի հատիկներից ավելի խոշոր, ավելի սլսլուն և ոսկեգույն էր լինում։ Ցողունը բազմաթիվ ճյուղեր էր տալիս և ամեն մի ճյուղ՝ բազմաթիվ լայն տերևներ, ցողունի միջին բարձրությունը 70 սանտիմետրի, առավելագույնը մեկ մետրի էր հասնում։ Ամեն մի ճյուղ գագաթին կրում էր փոքրիկ պարկիկներ, իրար կցված կլոր պաճեր, որոնց մեջ արդասավորվում և աճում էր հնդիկը։

Ձեռնեն (կանեփ)։ Կտավատի և շուշմայի ցեղին պատկանող բարձրահասակ և ճյուղավորված այս բույսը աճում էր շատ արագ. բարձրությունը հասնում էր երկուսուկես մետրից ավելի, իսկ ճյուղերի շրջագիծը՝ մոտ մեկուկես մետրի։ Ցողունը հատ, բայց դյուրաբեկ էր, ծածկված նուրբ և տոկուն կեղևով, որը օգտագործվում էր գանազան հաստությամբ առասաններ. կապեր, թելեր, նույնիսկ գործվածքեղեն հյուսելու համար։ Կանեփի կեղևից հանված մանած թելը շատ ավելի տոկուն էր. բան բրդի, բամբակի և այծի թելերից պատրաստվածը։ Սրանից հանում էին նաև ձեթ։

Խոտաղ (խոտհարք)։ Խոտի պահպանման սուրբը Խեչելեմի (Խաչելեմ) Թորոմն էր, որի շարաթական պահքը կոչվում էր Պետեկոտե և համընկնում էր հունիսի կեսերին (շարժական տոն էր)։ Գյուղացին խոտի տատություններ սպասում էր նրա պաշտպան սրբից և խոտարաղ սկսելուց առաջ գնում էր ուխտի, մատաղներ մորթում, ուրախություններ սարքում և սպա ձեռնարկում հնձին։ Ուխտագնացությունը նվազագույնը երեք օր էր տևում։

Կար երկու տեսակ խոտ՝ ցանովի և բնական։ Դերսիմում բնական խոտն աճում էր առավելապես անտառներում և լեռնային արոտավայրերում, տեղ-տեղ խոտի բարձրությունը հասնում էր մարդահասակի։ Բարձր խոտին ասում էին շիրեմն. գունը ցորենի տերևների նման տերևներ, նույնիսկ տարեկանի նմանող փոքր հատիկներ։ Տերևները կպչուն էին և բաղբը հյութ ունեին, ուստի անասունները շատ էին սիրում այդ բույսը։ Ի մասնավորի Ղրղրլրիլսեի, Տեր-Օհանի, Մալ և Սել լեռներում ու անտառներում աճում էր վայրի ֆիկի (ֆիթ) և կորնդանի մի տեսակը, որ բարձրորակ անասնակեր էր։

Խոտհունձը (խոտրաղ) սկսում էին նախ բնական հարոսներում, մանավանդ ֆիկն ու կորնդանը բաղում էին, երբ հատիկները դեռ թարմ վիճակում էին ու բույսը կաթնահամ էր։ Հնձած խոտը տեղում չորացնելուց և խորոմների վերածելուց հետո փոխադրում էին մարագները կամ դիզում կալերի եզրերին։

Բնական խոտի բաղը ավարտելուց հետո սկսում էին ցանովի խոտի բաղը։

Որպես ցանովի անասնակեր, բայց խոտային վիճակի մեջ, բաղում էին ֆիկը, առվույտը և կորնդանը, իսկ բուշնան, պոյը և դարին թողնում էին, որ հասունանան, մի լավ հասկ կազմեն, պատճերում հատիկները ամրանան, ինչպես ոսպն ու սիսեռը։ Որպես խոտ բաղված ֆիկը թողնում էին, որ արտի մեջ չորանա այնքան, որ խորում (խորոմ) կազմելիս չփշրվի։ Խորոմները կազմելուց և լավ չորացնելուց հետո, ինչպես վայրի ֆիկն ու կորնդանը, փոխադրում էին մարագները և դեան-

ղում առանձին բաժանմունքներում, որպեսզի սպասարկման ժամանակ նեղություն չկրեն։

Կալերը սկսելուց առաջ վերջացնում էին խոտհարքն ու անասնակերի փոխադրումը։ Խոտը հընձում էին մանգաղով, հավաքում տրմղով (երեք մատ լայնությամբ, երկու մատ հաստությամբ, մինչև 60 սմ տախտակի վրա ամրացված 10—12 փայտե ատամներով մի գործիք, որը ամրացված էր 1,5 մ երկարությամբ ձողի ծայրին, որով հավաքում էին ինչպես թափթփած հասկերը, նույնպես և հնձված խոտը)։

Բանջարաբուծություն։ Դերսիմի լեռնային շրջաններում բանջարաբուծությունը օժանդակ բնույթ էր կրում, տեղի բնակլիմայական պայմանները հնարավորություն չէին տալիս մշակելու և հասցնելու բանջարա-բոստանային որոշ մշակույթներ. օրինակ, լոլիկը (պոմիդոր) չէր կարմրում, բայց մշակում էին թթվի համար։ Ամեն տնտեսություն իր տան օգտագործման համար դռան էշեի արտում (տնամերձ հողամաս) ցանում էր իր օգտագործման համար հետևյալ բանջարա-բոստանային բույսերը՝ լոյվաղ (լուբիա), բակլա (բայլա), որոնք օգտագործվում էին կանաչ կամ չորացված վիճակում, անանուխ, սամիթ, ազատքեղ, ռեհան, դարչին, սոխ, շոմին (սպանախ), սխտոր, կոտեմ և մի շարք այլ համեմներ, կաղամբ (լահանա)՝ ավելի շատ թթու դնելու համար, վարունգ՝ օրը-օրին օգտագործելու և թթու դնելու համար, տեղպինտ (գազար), որը հողի մեջ հորում և ձմեռը գոմերի սաքուներում կամ օդախներում թարմ վիճակում ուտում էին։ Սա լայն օգտագործման համար մշակված բանջարեղեն էր, երբեմն արտեր էին հատկացնում տեղպինտի մշակմանը, որը ի մասնավորի երեխաների ամենասիրած բանջարապտուղն էր։ Ցանում էին նաև բազուկ՝ թարմ վիճակում տապկոց, պորանի պատրաստելու և թթու դնելու համար, տակ (կարմիր բազուկի արմատը)՝ առավելապես հողե պտուկներում խորովելու և որպես անուշեղեն ուտելու համար, դդումի երկու տեսակ՝ մեկը թարմ վիճակում տապկելու և ճաշ կամ դոլմա պատրաստելու, մյուսը խորովելու և ձմեռը ճաշեր պատրաստելու համար, շաբղալխամ (արեվածաղիկ)՝ երեխաների օգտագործման և ձեթ հանելու համար, լազութ (եգիպտացորեն)՝ խորովելու, խաշելու կամ աղալու համար, քալիկ (սեխի մի տեսակը, որ չէր հասունանում)՝ թթու դնելու համար, շողգամ՝ հորում էին հողի մեջ ձմեռը պուլդուրի մանրունքով և յուղով ճաշ պատրաստելու համար, բողկ՝ զործածում էին որպես աղցան։

Նշած բանջարեղենների մեծամասնությունը և ուրիշներ վայրի վիճակում առատորեն աճում էին Դերսիմի սարերում և անտառներում։ Այն, ինչ մշակում էին տնամերձ հողամասերում, աննշան մի մասն էր սարերում աճող բանջարների, նույնիսկ կարելի է մտածել, թե այսօրվա մշակած բանջարների մեծամասնությունը սարերից բերված հունդերի և արմատների ընտանեցրածներն էին.

Լեռների բերքն ու բարիքը այնքան առատ էր, որ ի մասնավորի քրդերի մեծամասնությունը չէր մշակում դրանցից։ Միայն հայերն էին մշակում և օգտագործում։ Քրդերը առավելապես օգտվում էին սարերում աճող բերքից և բարիքից թարմ և չորացրած վիճակում՝ աղձր, վանին, զանպուրը, կոտեմը, սոխը, սխտորը և այն՝ որպես տաբկոց, լվինձը, ավելուկը, կակավիլը, մոսկորը, սունկը, ծաղիկը՝ որպես թթու, ժախր, բոժախը, թաթիկը, մոսկորը (սա նաև տապակած), բարրոդին, կռապոլիկը (հատապտուղ էր), դարնծիլը, խավուծիլը, էրժնա կանկառը, խաս կանկառը և զանազան այլ բանջարներ, որոնք առատությամբ աճում էին առավելապես Սլպուս, Մնձուր, Մալ, Սել և Պաղրի սարերում ու Հալվորի ս. Կարապետի, Կարմիր եկեղեցու, Խութաց-ձորի մթին անտառներում։ Թլակ, Կոլեր, Գալոներ գյուղերում, լեռնային բնական բացառիկ պայմանների շնորհիվ պարտիզպանությունն այնքան զարգացած էր, որ բանջարա-բոստանային բույսերը բավարարում էին ոչ միայն բնակչության կարիքները, այլև լայն չափով արտահանվում մերձակա և հեռավոր այն գյուղերը, որոնք զուրկ էին այդ բարիքներից։ Այդ գյուղերի բնակչությունը ապրում էր միայն բանջարաբոստանային մշակույթների շնորհիվ, փոխանակելով ցորենի, յուղի, մեղրի, մանանայի և այլ մթերքների հետ։ Թլակի սեխն ու ձմերուկը, չոր լոբիան, լոլիկը համբավ էին ստեղծել գյուղի սահմաններից դուրս և հեռավոր շրջաններից, մինչև մեկ օրվա ճանապարհ կտրելով, գալիս էին և փոխանակության կարգով ստանում այն, ինչի կարիքն ունեին։ Նշանավոր էին Կոլերի և Գալոներր լահանան, շողգամը, փաթաթեսը և այլ կարգի բանջարները։ Մասնագետ պարտիզպաններ և բանջարամշակներ էին այս գյուղերի բնակիչները։ Շատերը նախապատվություն էին տալիս չոր լոբիան անպայման Թլակից դնելուն, եթե նույնիսկ իրենք ևս մշակած լինեին։ Ասում էին, թե այդ գյուղերի բանջարեղենը տարբեր համ և հոտ ունի։

Բնաղուն։ Սա գյուղացու մի ընտանիքի մեկ տարվան (կալե-կալ) հացի պաշարն էր իր բոլոր օժանդակներով (ալյուրը կամ ալյուրի հատկացվելիր ցորենը, պուլդուրը, կորկոտը, սմրտիկը, ա-

պուրցուն, նույնիսկ դաշտայի այլուրը։ Աղունը բնակունի մի մասն էր միայն՝ ադացվելիք ցորեն։

Կալը վերջացնելիս, երբ ամենավերջին բերքը կորեկը, կամնված և կալնուկոտը ավարտված էր, գյուղացի կնոջ ամենամեծ դրաղմունքը բնակունի պատրաստությունն էր դառնում։ Նախ պատրաստվում էր աղունը։ Ցորենը բարմաղով մաղում, լեսը, խրդրմը հանում, տեփրում և լցնում էին հյուսված (գործված) և լմված պարկերի մեջ։ Ցորենը նախ բան չրադաց ուպարկելը, աղբյուրի դուռի մեջ դնում (լվանում), կալում կամ տանիքում չորացնում էին, ապա նոր ուպարկում չրադաց։

Աղունը աղալուց և տուն բերելուց հետո լցնում էին վայտե ամբարները և պինդ կոխկրտում, որ լավ նստեր և օդ չտաներ։ Աղունն աղալուց առաջ դարեկի մեջ հարյուրին երկու որում էին խառնում, լավաշը ավելի բարակ բացվելու և շուտ չչորանալու համար։ Արտաքի ցորենի նման, բայց ցորենից ավելի մանր, սև գույնի հատիկ էր, որը թեև դառնահամ էր, բայց բարձրացնում էր հացի որակը։ Դաշտայի հյուրի ցորենը անդամման լվանում էին, չորացնում և առանց որում խառնելու հացայլուրից ավելի մանր աղում։

Աղունին առանձին պատրաստում էին նաև պուլղուրի և կորկոտի ցորենը։ Պուլղուրը պատրաստում էին դրզբլնա (կարմրահատ) ցորենից, որ շատ համեղ էր լինում։ Նախ ցորենը լվանում, ապա մեծ խալկինների մեջ օջախների վրա խաշում էին։ Օջախները վառվում էին կալի եղերքում, որտեղից անցնում էր առուն։ Խաշված ցորենը բեվկիրով բամում և մապից պատրաստած խուրջինի մեջ էրն լցնում, որը դրված էր լինում խալկինների մոտ, խոնչայի վրա։ Երբ ջուրը մի լավ բամվում էր, տան երիտասարդ խուրջին շալակում և կալի կենտրոնում փռված կապերտների, փալասների և լավանների[1] կենտրոնում դրված մեծ խոնչայի վրա էր դատարկում, ուր մնում էր մինչև շողիանալը և նստելը (հանդարտել), ապա տան հարսներն ու աղջիկները այն խոնչայից ցած էին թափում և փալասների ու լավանների վրա փռում։

Պուլղուր խաշելը սկսում էին արշալույսը բացվելուց առաջ, որպեսզի մինչև արևածաղ առաջին խաշուն պատրաստ լիներ, ու երբ արևը ծաղեր, խաշված պուլղուրի առաջին հաճը խոնչայի վրա դիմավորեր, որպեսզի սերկուն և պերեմեքով էզներ։

Երիկունը փալասները և լավանները ծայրերը վեր էին հավաքում և բավական քաշված չորացած, պուլղուրի փոքրիկ բլուրները ծածկում էին, որ գիշերվա ցողից չիոնավանար։ Մինչև պուլղուրի լավ չորանալը, գիշերները մի քանի հոգի կալում հսկում էին դրան։

Կորկոտի ցորենի հատիկը ավելի մեծ, սպիտակ և դիրուկ պետք է լիներ, քան պուլղուրինը։ Կորկոտը չէին խաշում, այլ լվանալուց հետո փռում էին, որ կիսաչորանար (բաշվեր), ապա պուլղուրը և կորկոտացուն միաժամանակ տանում էին դրեղ՝ ծեծելու։

Կորկոտացուն կամ պուլղուրը համեմատական չափով, նայած կալի ծավալին, լցնում էին կալի մեջ մինչև չորս մատ թանձրությամբ, ապա ջրջրդնում (ջուր ցանում) և լավ խառնում իրար, որպեսզի բոլոր հատիկներն էլ ջուր առնեն։ Կալը պատրաստելուց հետո գցում էին երկանբարբը, որ դառնար։ Ամեն անգամ տինկ-բարը կալի մեջ լրցված հատիկների վրա դառնալիս, տան փոքրիկ թիակով կորկոտացուն կալի եզերքներից հրում էր դրա տակ և այսպես շարունակաբար՝ մերթ ջրջրդնում, մերթ էլ կալի եզերքից հատիկը բարի տակ էր մղում, մինչև թեփը հատիկից մի լավ դատվում էր։ Կորկոտացուն և պուլղուրը նույն ձևով թեփահանում էին և տուն տանելուց հետո երկու օր գցում թեփի մեջ և ապա երնում (հովին տալիս), հատիկը թեփից դատելու համար։

Կորկոտը կամ պուլղուրը թեփից հանելուց, երնելուց հետո փռում էին արևի տակ չորանալու, ապա տան հարսներն ու աղջիկները հավաքվում էին կրակատուն և կամ տանիքներում հոռում (հատ-հատ մաքրել բարերից և այլ խլորիկներից)։ Հոռելու գործողությանը հաջորդում էր պուլղուր աղալը։

Պուլղուր բաշելը (աղալ) ևս տան երիտասարդ աղջիկների ու հարսների պարտականությունն էր։ Նրանց օգնության էին գալիս դրացի կամ աղգական հարսներն ու աղջիկները և մեկ, երկու, երբեմն մինչև վեց երկանքով տարվում էր աշխատանքը։ Իրար եկող ջահելների լեզվին և շարժումներին աղատություն տալու համար տղամարդիկ ներս չէին մտնում, նույնիսկ տան ավագ կանայք, որոնց հետ դեռ հարսները հարսնություն էին տանում, աշխատանքի նոուն ոտքին հեռանում էին այդտեղից։ Պուլղուր բաշելու աշխատանքը տոնական բնույթ էր ստանում, երգում էին, պտրում,

[1] Լավա՝ կտավից կարված մեծ սավան, որի վրա հացի գնդերը շարում և ծածկում էին, որ դունդը տունի դաս լավան ադատագործում էին նաև թուք թափելու, պատեղ չինելու և տնային այլ պետքերի համար։

կատակներ անում, բոված չեռեռով աղինձ, շամշարառն լեպլեպի և զանազան չոր մրգեր անուշ անում և եռանդով աշխատում մինչև աղունը վերջանար։

Տանտիկինը այդ օրը պուլղուր քաշողների համար մասնավոր կերակուրներ էր պատրաստում, կերցնում, խմեցնում և ճամփու դնում օգնության եկողներին։

Հաջոր օրը տան երեց հարսները աղացած պուլղուրը զանազան մաղերից անցընում, տեսակավորում, փլավի, դոլմայի, կլորիկի պուլղուրները զատ-զատ ծափերի կամ ծղերի մեջ էին տեղավորում, սմրտիկը[1] առանձնացնում, կորկոտ-ապուրի և բեշկեկի (հարիսա), կորկոտ-տեռեի, թանապուրի և թանիաշի կորկոտը զատ-զատ ամաններում կարգի էին դնում և այսպիսով տան բնաղունի աշխատանքը վերջացնելով, անցնում էին աղարթուի դոսավորմանը։

Բնաղունի մաս կազմում էին նաև ոսուր, լուբիան, որոնք նույնպես հոում և զատ-զատ ամաններում տեղավորում էին։ Ոսպի մի մասը պուլղուրի նման բաշում և ապուրցու էին պատրաստում, իսկ չաղացված ոսպը չոր լուբիայի նման զանազան հաշեր պատրաստելիս էին օգտագործում։

Աղունն առհասարակ արվում էր երկու անդամ՝ աշնանը և դարնանը, չաղացված ցորենը պահում էին մասնավոր ամբարներում, որոնց պատերը, հատակը կավով լավ ծեփված, լողված և կոկված էին լինում։

Ցորենի պահպանության համար մասնավոր ամբարներ ունեին բազմամարդ ընտանիքները և առավելագույն ցանքատարածություն ունեցող տնտեսությունները, մնացյալ մեծամասնությունը ալյուրը պահում էր տախտակից պատրաստած ամբարներում, իսկ ցորենը՝ ծղերում, խարարներում[2], խուրջիններում։

Խարարները շարում էին քով-քովի և չափով լցնում, ամեն մեկ խարարի մեջ մեկ սոմառ արմրտիք։

Տուն-ամբարներում պահված ցորենը 15 օրը մեկ շրջում էին մի կողմից մյուսը օդ տալու, ցորենը խոնավությունից, աճկելուց պաշտպանելու և անվթար պահելու համար։

Տարեկան տան բնաղունի պատրաստության ժամանակ հաշվում էին դգալ (գդալ) գլուխ, այսինքն՝ տան անդամների թվի համաձայն (դգալով հաշվում էին տան անդամների թիվը), առանց սեռի և տարիքի խտրության։ Հաշվումը կատարում էին անձ-գլուխ՝ տարեկան մեկ սոմառ։ Օրինակ՝ եթե ընտանիքն ուներ 20 ուտան բերան, ապա տան մեծը պարտավոր էր հաշվի առնել իրենց արտադրանքը և ըստ այնմ պատրաստել բնաղունը՝ ըստ տան անդամների թվի, 20 սոմառ։

Սերմացուն անձեռնմխելի էր, այն պահվում էր առանձին խարարներում կամ ծղերում, իսկ եթե բնաղունի համար չէր բավարարում եղած ցորենը, դիմում էին օժանդակ գարուն և կորեկին և կամ վոխանակության կարգով լրացնում պակասը, որը կազմում էր տնտեսության դոյության երաշխիքը։ Բանի դեռ հացի մթերման՝ բնաղունի հարցը վճռված չէր, տան ավագի հոգին խռով էր, նա պարտավոր էր կալերից անմիջապես հետո վերջնականապես ապահովել անձ-գլուխ մեկ սոմառ ալրացու ցորենը և կամ օժանդակ հացահատիկները։

Եթե հաշվենք 20 անդամանոց (ուտան բերան) մի ընտանիքի կալից-կալ հացի ապահովության համար նախատեսված 20 սոմառը, կունենանք 20×16=320 կոտ և կամ 320 կոտ×12 հոխա=3840 հոխա և կամ 5,120 կգ հացահատիկ։

Գյուղացին հացի և յուղի հետ էր կապում իր տան անդամների կուշտ կամ անոթի մնալու հանդամանքը, ամենից առաջ հացն ու յուղը, մնացյալը երկրորդական էր, երբ մի ընտանիք իր հաշվառման համաձայն ապահովել էր տարեկան բնաղունը, ինքզինքը հանգիստ ու ապահով էր զգում։

Տան անդամների մարդահամարի մատյանը ղզլնոցն էր, որը կախված էր լինում թոնրատան կենտրոնական ձյունից։ Եթե մի նոր երեխա էր ծնվում, տան մամիկը նույն օրն իսկ մի գդալ էր ավելացնում դգլնոցում։ Նա երբեք նկատի չէր առնում, թե երեխան կաթով է սնվում և դեռ ուտան բերան չէ, նրա փոխարեն ծծմայրն էր ուտելու, որ երեխային առատ կաթ տար, ու երբ գդալը ավելացնում էր դգլնոցում, հրճվարակով հայտարարում էր.

— Քսանը քսանմեկ եղավ, դուրսլան բլեն է-վելցնողին։

Իսկ երբ մեկը մահանում էր, հաշվեմատյանն դգլնոցից մի գդալ էր հանում և հաշվեկշիռը հոմվասարեցնում։

Հյուրերի համար առանձին գդալներ ու դգլնոց ունեին, որը ենթակա չէր հաշվառման, իսկ տան

[1] Սմրտիկը բաշված պուլղուրի ալրախառն մանրունքն էր, որից պատրաստվում էր նաև խաշիը։

[2] Խարարը այծի մազից և բրդի թելերից իսոն գործված մեծ պարկ էր, որը դնում էին բիլարում, դետնից բարձր տախտակի դարակների վրա։ Խարարի պարունակությունը չափը մեկ սոմառ էր, սոմառը 16 կոտ էր, իսկ մեկ կոտը՝ 12 հոխա, և կամ 12×16=192 հոխա, որը հավասար էր 256 կգ։

տեղամասերից ամեն մեկը որևէ նշանով առանձնանում էր իր դրացուց։

Ջրաղաց (չաղարդ) և դինդ (տինկ)։ Ամեն գյուղ մեկ կամ ավելի ջրաղաց ուներ (նայած բնակչության թվին), որոնք իրենց ծագման թվականից մինչև մեր օրերը մնացել էին նախնական վիճակում։

Ջրաղացներն առանձնակ կառուցվում էին ձորափերին, որոշ թերության վրա։ Ջրաղացի շենքը սովորաբար բարաշեն էր լինում, բաղկանում էր մի ընդհանուր սրահից, մի սենյակից և դնդանից։

Ջրաղացները և դինդերը իրար կից էին լինում։ Ջրաղացի ջուրը դուրս գալով դնդանի ջրանցքից, հոսքով 50 բայլ հեռավորության վրա լցվում էր դինդի ջրատար խողովակը (նայած թերությանը) և ուժեղ հոսքման ազդակ պատճառում (գործադրում) նաև դինդի փեղկերն ու բարը։

Դինդերի շենքի այն մասն էր, որը գտնվում էր այրատան և երկանքարարների ներքնամասում, ուր գտնվում էր հենձանի վրա նստած փեղկերի սրոնին։ Դնդանի բարձրությունը երկուսուկես մետր էր և կազմում էր ընդհանուր մակերեսի կեսը, այնպես, որ շեղակի իջնող ջրատար խողովակը սիփոնի ուժեղ հոսքմամբ կարողանար ազատորեն պտտեցնել փեղկերը և ջուրը թափել սայտատակված այն տանը, որի պատի տակի ջրանցքից դուրս էր խոխոջում։

Դնդան էին տանում այն պատճառով, որ դեռևավոր այդ մասը, որը սանդղուղով հարաբերության մեջ էր վերի մասի հետ, որևէ լուսանցք չուներ և խոր մթություն էր տիրում այնտեղ։ Այլ տեղերում տանում էին նաև ջրատուն՝ փեղկերի թևերին ուժեղ խփվող և այս ու այն կողմ ցայտող ջրի պատճառով, որոշ տեղերում էլ կոչում էին շաղատուն և ցայտուն։

Դնդանում կամ ջրանում գտնվող սարքավորումն ունենում էր հետևյալ գաղավորությունը։ Գետնից կես մետր բարձրությամբ ամրացված միակտուր մի մեծ բարի (հենձբար) կենտրոնում գտնվող երկաթե կլորության մեջ նստում էր ձողի ծայրին ամրացված և համապատասխան հաստություն ունեցող երկաթե-տատամ՝ հենձաքար։ Ձողի կենտրոնում գտնվում էր իրենից դուրս ցցված կլոր այն գոնդը, որի շուրջ կազմերում հորիզոնական ձևով ամրացված էին փեղկերը (տախտակե թևեր)։ Գնդից վեր մնացող վալի վերի ծայրին ամրացված բառակուսի տուփը բարձրանում էր վեր և անցնելով անշարժ նստած տակի ջաղջի բարի կենտրոնի համաչափ անցքից, մտնում էր վերի բարի կենտրոնում գրված-կարմուճակի բառակուսի ծակի մեջ և փեղկերի պտույտների համաձայն գարձնում ջաղջի քարը։

Դնդանից կամ ջաղջից վեր բարձրացող սարքավորումներ միանում-էր ջրաղացում գործող լրացուցիչ սարքը. անշարժ և հաստատուն տեղավորված տակի ջաղջերարի կենտրոնում պտտվող ձողի ծայրում ամրացված քառանկյուն տուփ մտնելով կարմուճակի քառակուսի տան մեջ, դառնում էր ինքն իր շուրջը և կարմուճակի օգնությամբ դարձնում նաև վերի բարը։

Կարմուճակը ծառայում էր ոչ միայն որպես բարը դարձնող առանցք, այլև այլուրը մանր կամ խոշոր աղալու միջոց, որովհետև այն կիսով չափ էր միայն գետնվում վերի բարում համաձև փորված կաղապարի մեջ, որի կենտրոնում ցորենը հոսելու կլոր ծակն էր։ Քարերի եզերքից վեր բարձրացած չորս ոլորների կենտրոնում հանդչում էր ցորենը լցնելիք ամբարը։

Ասեփերլիկ. աղում. ցորենատուն անուններով անվանված այս ամբարը բառակուսի էր, վերևի արամագիծը՝ մինչև մեկ մետր, նույնքան՝ խորությունը, վերի պոնկից ասիմանարար նեղանալով մինչև վարի մասը, հասնում էր 0,25 բառ. մետրի, որը նստում էր դեպի բարի ծակը թերված եզրավոր մորուքի մեջ։ Մորուքի ներքին արամագիծը հավասար էր ցորնատան վարի մասի արամագծին, որի բարին նայող կողմում բացված էր գոնակը։ Ամեն անգամ ջաղջի բարը պտույտ էր գալիս իր վրա նստած ջախջախը, շարժման մեջ էր դնում մորուքը, որը մեկ աջ, մեկ ձախ շարժվելով, ցորենի հատիկները հոսեցնում էր ծակի մեջ։

Գույդ երկանքների երկարությամբ և առաջի-բարին մոտեցող բարձրությամբ գետնվում էր լինում այլիր-տունը (այրատուն), ուր թափվում էր երկու բարերի բկից (պողպ) դուրս թափված այլուրը։

Ջաղացպանի (ջաղջիպան) փորձառու մատների շոշափումով հասկացվում էր այլուրի մանր կամ խոշոր լինելը և ըստ այնմ պրկվում կամ ձգվում մորուքի վրա կապված լարանը և կամ կարմուճակի օգնությամբ շարժվում բարը։

Մանանգան ջաղջիպանը ինքն էր պատրաստում ջաղջերարը, փորում կարմուճակի տեղը, ծակում գույդ բարերը, կոտրում, թերություն տալիս ատամներին, որ դեպի այրատուն թափի ազատված այլուրը։ Ջաղջիպանը ինքն էր պատրաստում գիրը, գետնվում բարերը, կազմում և դասավորում ձողի գնդիկին (թոփ) ամրացված փեղկերը, ուղղություն տալիս հենձերարի կենտրոնում նստած



Նկ. 6. Քրաղաղի մասերը։ 1. չարխ—ա. փեռկ, բ. հեծներար, գ. թոփ կամ դունտ, դ. սոնի, ե. հիծան, Հ. կարմուճակ, Ձ. համբար, 4. ջաղացքար—ա. վրայինը, բ. տակինը, 5. նոսվ—ա. սիֆոն, 6. ալրաթի, 7—8. կռանների։

լիր հնձանի գալային. Ջաղի կամ դինգի հետ կապված բոլոր աշխատանքները նա էր կարգավորում։

Ջաղջիդաներ աշակերտ կամ օգնական չէր ունենում, ջրաղացը աղուն բերող ամեն բեռնատեր նրա օգնականն էր՝ պարտավոր էր օգնել ջաղջիանին խուրջինից կոտով ցորեն սարաթը լցնելիս, այրանից այլուրը խուրջիններում տեղավորելիս։

Ջրաղացի մակերեսի 0,75 մասը ծառայում էր որպես բեռնարկղի պահեստանոց, ուր դասավորում և իրար վրա շարվում էին աղունի խուրջիններ կամ այլուրի պարկերը։ Ընդհանուր առմամբ ուղարկվելիք հացահատիկի տասը կոտից մեկը տրվում էր ջաղջիին կամ հախ, որի փոխարեն այլուր ուղարկողը իրավունք ուներ օգտագործելու դինգը, առանց բաժին տալու, պայմանով, որ դինգի հետ կապված աշխատանքը կատարեն իրենք՝ կորկոտ կամ պուլղուր ծեծողները։

Բնագունը անից ջրաղաց կբերեր, այլուրը աղալը, առն փոխադրելը և ամբարները լցնելը, կորկոտը, պուլղուրը անից դինդ, դինդից առն կբերեր աղամարդկանց գործն էր, իսկ դինդում կորկոտին և պուլղուրին ջուր տալը, ծեծելը, ծեծոնի որակը ճշտելը, Բեգից հանելը, երնելը (հովին աալ), տեսրելը, հոելը, աղալը և տեղավորելը կնիկ-մարդկանց գործն էր։

Ջրաղացում կար և սենյակ, ուր գտնվում էր մշտավառ օջախը, պատից կախված էր լինում սանը։ Օջախի տակը սալարկած էր, ճարճատուն կրակը վառվում էր ռայբարի վրա, որը հրակայուն էր, շիկանում էր, ապա օջախից դուրս էին բերում կրակը, ավլում, սրբում սալրարը, վրան դնում ավանդական բաղարջը, սաճը ծածկում և կրակը լցնում սաճի վրա։ Իր շողիով և շիկացած բարի ու սաճի ջերմությամբ ոչ թե եփվում, այլ խորովվում էր ջաղջի բաղարջը, որը շատ համեղ էր լինում։ Ամեն առն և ամեն տեղ թխում էին բաղարջներ, բայց ոչ մի տեղ, ոչ մի թխվածք չուներ ախորժելի այն համը, ինչ ջաղջի բաղարջը։ Ջրաղացից ներս սար գնող ամեն մի աղացող կամ սովորական մի անցորդ՝ հովիվ կամ որսորդ, պետք է հյուրասիրվեր բաղարջով։ Այրատերն իր աղունի խեռն ու պեռեմները ապահովելու և ջրաղացի աննեղության փիրին գոհացնելու համար ավագ պարտականություն էր համարում այրատերից իր ձեռքով բերել բավարար չափով այլուր և ջաղջիանի օգնությամբ կամ նրա ցուցմունքներով շաղել և թխել բաղարջը։

Ընդհանրապես, առանց սեռի, աղդության և դավանանքի խարությունի լեռնաշխարհի թե հայերը, թե քրդերը հավատում էին ջրաղացներում ապրող անհանգիստ ոգիների գոյությանը, որոնք հրկում էին ջրի պենտին, սիֆոնի հզոր ուժին, փեռակների դարձին, քարերի միալար երգին, ջախջախի ձայնին և այրատան պերեքեքին։ Ջրաղացի սուրը (փիրը) վայիրե-արիան (ինչպես կոչում էին երգերը), ջաղջին տերը (ըստ հայերի) պատկերացվում էր ոսիտակամորուս, բարձրահասակ, թիկնեղ մարդու կերպարանքով, որը հսկում էր ջրաղացի բոլոր աշխատանքներին, օջախի կրակին, ջրի հոսանքին և թույլ չէր տալիս ոչ որի չարությունն հասցնել իր հսկողության տակ գտնվող ջրաղացին և նրա օջախին հավատացող մարդկանց։

— Ես հեղ ոխսար բեռ ցորեն տարի, բաղարջին փայր, ջաղջին հախ տալուց հետո, ուիր բեռ կոխված ալիր բերի տուն։

— Ղուրպան բլիմ ջաղջին տիրոջը, մեկս երկու արավ, տուն ու դուռս պերեքեքով լեցուց։

Եվ կամ՝ անհյուրասեր կծծի մարդկանց մասին ասում էին.

— Ոկոն երբոր ալրանից ալիրը բաղարջի տաշտն էր լցնում, ձեռները դողում էին, ալիրը թափում էր ալրատուն, օր բիչ բաժին տա բաղարջին, բմմա հինդ բեռ ցորեն տարավ ջաղաց, չորս բեռ ալիր բերից տուն։

Ջրաղացպանին համարում էին արդար և անհեղ մարդ, ինչպես հովվին, և նկատում նրան ջաղջի տիրոջ պաշտպանյալը, ու եթե ջրաղացպանին անակնկալ մի փորձանք կամ դժբախտություն էր պատահում, եղբայացնում էին, թե դողացել է և տիրոջից խրվել։ Պատմում էին, թե մի օր հանկարծ ջախջախի ձայնը լռում է և բարը կանգ առնում, ջրաղացպանը, որ բնած է լինում օջախի կողքին, բնից դարթնում է և կես-դիշերին բահը ուսին դրած տովի եղերքով գնում կենտրոնական պենտը և հեռվից տեսնում սոիտակամորուս մի մարդու, որը պենտի ջուրը կապում էր գնալի ջրաղացի առուն։ Ջրաղացպանը աճապարում է տեսնել իրեն օգնության հասնողին, բայց երբ հասնում է պենտի կավառին, տեսնում է, որ ջուրը կանոնավոր հոսանքով դալիս է գնալի իր առուն, իսկ ջուր կաղողը անհանգիստ է։ Ջրաղացպանը ուշքի է գալիս և հասկանալով, թե բանն ինչումն է, վերադառնում է ջրաղաց, գնա հեռվից լսելով սիֆոնի սուլոցը, ջախջախի ձայնը։ Երբ հարցնում են ջուրը կտրվելու պատճառը, նա դողդոջուն ձայնով ասում է.

— Ղուրպան բլիմ ջաղջի փիրին գորին ու գորությանը. գնացեր գեղ, լավ գոչ մը բերեր, որ մա-

տաղ անիմ, ղոչին տերը բանի կոտ ցորեն օր ուղի, տվեր, բաղտր մի անեք,—և պատմում է տեսածը։ Ներկաները հուզվում, ծնրադրում, բաղարջ են լինում և մեկի տեղ դյուղից երեք մատաղացու են բերում, մեկը մորթում պենտի կավառի այն տեղում, ուր երևացել էր տեսիլը, մյուսը՝ ջրաղացի խողովակի ջրի պենտի մոտ, որ արյունը խառնվի ջրին, իսկ երրորդը՝ ջրաղացի շեմքին։

Այս և նման դեպքեր շատ էին պատմում, թե ինչպես ձմեռ ժամանակ, երբ թիփին դելխեղդ էր անում, ու երբ դայլերի ոհմակը շրջապատել էր դյուղից բավական հեռու դտնվող ջրաղացը, ուր փակված էին ջաղջպանը և երկու աղուն բերողներ, ու երբ դայլերը փորձում են ջրաղացի երդիկից ներս կոխվել, ի դարմանս երեք թաքնվողների, հանկարծ վնդստոց է լսվում և իրարանցում տեղի ունենում, և դոան ետևից դուրս նայող դյուղացիները տեսնում են, թե ինչպես մի ալևոր հսկա բռնում է դայլերից մեկի կոկորդից և նետում ոհմակի կենտրոնը, և ինչպես գայլերը բդկտում են նրան ու կորչում ջրաղացի սահմաններից։

Դոան ետև թաքնվողները երբ դուրս են դալիս իրենց ազատարարին դիմավորելու, տեսնում են, որ նա անհետանում է ջրի անցքի այն բացվածքում, ուր փեռկերից դուրս ցայտող ջրաշերտերից առու է կազմվում։

Ջրաղացը գյուղերում ծառայում էր և որպես փախստականների թաքստոց, որոնք պաշտպանվում և կերակրվում էին ջրաղացպանի կողմից, ջրաղացի օջախի տիրոջ սիրուն, ջաղարջը նույնպես ժամանակավոր հյուրանոց էր, այնտեղ էին տպավինում դյուղ մտնել չցանկացող մարդիկ, մի լիլ հանգստանում, բաղարջ ուտում և մեկնում։

Եթե պատահեր, որ ընդանում փեռկերից մեկը վնասվեր, սիֆոնը լավ չգործեր, ջաղջին պողպատ մի բան ընկած լիներ և կամ պենտը ճեղքվեր, այդ բոլորը վերագրում էին ջրաղացի փիրի ընդվզումին, որով փիրը նախազդուշացնում էր ջրաղացպանին, եթե նա հյուրին լավ չէր դիմավորել, աղուն բերողների հետ լավ չէր վարվել և կամ ուրիշներից աննկատ գողացել էր աղունից։

Ջրաղացի և գինդի տանիքները հողածածկ էին լինում։ Դինգում գրեթե ոչ ոք չէր բնակվում, ներսը, բացի կալից և դինգ-քարից, գրեթե ոչինչ չկար, դուռը դրսից փոքր փոկով գոցված էր լինում և ամեն ոք կարող էր բանալ այն ու ներս մտնել և սակայն ոչ ոք չէր մտածում որևէ վնաս հասցնել գինդի սարքավորմանը, վախենալով պահապան սրբերի միջամտությունից։

Դինգը գործում էր առավելապես աշնանը և մասամբ գարնանը, ամեն մեկն իր հաշվին բերում ծեծում և տանում էր կորկոտը կամ պուլդուրը, առանց ոչ ոքի հարցնելու կամ հաշիվ տալու։

Դինդն էլ ուներ նույն կազմությունը և ձևը, ինչ ջրաղացը, այն տարբերությամբ միայն, որ ջրաղացում դույգ քարով էին ցորենն աղում, գինդում ուղղահայաց տինկ քարով ծեծում և թեփը հանում էին։



Նկ. 7. Դինդ (տինկ)։ 1. քարե աղաման (կալ), 2. ուղղահայաց դարձող երկանքաքար, 3. քարը տակի փեռկերին միացնող ձող (սոնի), 4. թուր։

Դինդի քարը, հորիզոնական ձևով սալահատակված կալի մեջ, նույն ուղղությամբ հաստ սյունին ամրացված և իր առանցքի շուրջը դարձող մեծ երկանքաքար էր, որը գործում էր ջրի ուժով, ինչպես ջրաղացը։ Դինդի կառույցը նման էր ձիթհանի կառույցին, միայն այն տարբերությամբ, որ ձիթհանի քարը դառնում էր կալի մեջ՝ եզի, գոմեշի կամ ձիու ուժով, մինչդեռ գինդի քարը դառնում էր ջրի օգնությամբ, ճիշտ ջրաղացի նման։ Դինդն էլ երկհարկանի էր։ Վարի հարկում փեռկերն էին դնտեղված, որոնք ամրացված էին երկրորդ հարկի կալին, կենտրոնից դեպի առաստաղը ուղղահայաց ձևով կանգնած կաղնու ձողին։ Կիսահորիզոնական ձևով փայտե լայն խողովակի մեջ վազող ջուրը ուժեղ կերպով դուրս էր ցայտում սիֆոնից (շորս կամ հինդ անգամ ավելի նեղ, քան խողովակը) և դարնվում փեռկերին, որոնք ջրի ուժեղ ճնշման տակ դառնում էին առանցքի շուրջը, իրենց հետ դարձնելով երկրորդ հարկում նույն ձողին ամրացված երկանքաքարը, որը թավալում էր կալի մեջ, ինքն իր շուրջը, համապատասխան փեռկերին միացած ձողի շարժումներին։ Դինդը ոչ ալիրտուն, ոչ չախչախ և ոչ էլ ալրամրտը ուներ։ Նրա կազմությունը շատ պարզ էր և մնում էր նախնական վիճակում։ Ուներ հետևյալ մասերը՝

բարև ավագան՝ կայր, հարիւրնական ձեով դարձող երկանրարարը, բարը ասկի փեռկերին միացնող ձողը, թուրը, որով բարը ամրացնում էին դարձող ձողին։

Չրադացների մեծամասնությունը անհատական սեփականություն էր, կային նաև համայնական չրադացներ, որոնք պատկանում էին գյուղին։ Գյուղն իր միջոցներով կառուցում, առու էր հանում, պենտը բռնում, կավաս կապում և վերանորոգում, հանձնելով այն չրադացպանին, որին ասում էր մի կոսի փոխարեն կես կոս էին վարձ տալիս։

Կային և աղաների, մեծ հողատերերի ու հարուստների չրադացներ, որոնք վարձով էին տալիս չրադացպանին, ստանալով ստացվելիք ալրի փայի եկամտի 75 տոկոսը, այսինքն՝ ասում էր ալից մի կոս, ստացված հատի երեք շինիկը առնում էր ալան, իսկ մեկ շինիկը տալիս չրադացպանին։

Համայնական չրադացպանները չէին փոխվում, նույնիսկ նրանց մահից հետո էլ այդ իրավունքը փոխանցվում էր նրանց ժառանգներին. մինչև այն աստն, որ չրադացպան չէր գտնվում, չէր շարաշտում. նման դեպքերում անմիջապես վարում և նոր չրադացպան էին վարձում։

Զիրեան։ Դերսիմն անտառապահական շրջան էր, անգրագիտ հայերն ու բրդերը պանվելով կենդանական յուղի առատության մեջ, զարմանալի չունեին ձիթապտղի և ձիթայուղի մասին, իսկ բուսական յուղ միայն հայերն էին օգտագործում։

Նախկինում ձեթը առավելապես օգտագործել են լուսավորության, մանավանդ վանքերի և եկեղեցիների սրբանկարների առաջ մշտավառ կանթեղներ վառելու համար։ Դա գալիս էր պատկերապաշտության շրջանից, երբ հայրապետական մոգովի սրենագրական որոշումով ուտիքի և պահքի կանոնագրություն սահմանվեց և բուսական յուղը (ձեթը) նկատվեց պահոց կերակուրներ պատրաստելու անմեղանշելի միջոց, իսկ կարագը (կենդանական յուղ) դասվեց մեղանշելիների շարքը և սահմանվեց միայն որպես ուտիք օրերի գործածական յուղ։ Սրա հետևանքով ձեթը գնալով մոտաբ էր գործել նաև առանձին կենցաղ։

Ձեթի գործածության նորույթը Դերսիմում բրիտանական կրոնի ազդեցությամբ վերագրելու գլխավոր պատճառը այն է, որ նույն լեռնաշխարհում և բնական նույն պայմաններում ապրող բրդերը այնպես էլ պետք չէին դղացել ձեթի գործածության, բանի որ չունեին ուտիքի և պահքի կրոնական սահմանափակումները, ու եթե պետք են ունեցել կանթեղ վառելու, անհրաժեշտ ձեթը փոխանակության կարգով ձեռք են բերել գրացի հայերից, այնպես որ լեռնաշխարհում ձեթի գործածության նախակարապետները հայերն էին նկատվում։

Ձեթի սահմանափակ օգտագործման պատճառով Դերսիմի լեռնաշխարհում ձիթհաններ չկային, մինչդեռ Դերսիմի դաշտային և լեռնադաշտային շրջաններում, Արածանի և Եփրատ գետերի հովիտներում վաղուց ի վեր գոյություն են ունեցել դրանք։ Դա բացատրվում է նրանով, որ այդ շրջաններում անասնապահության սահմանափակումներ և կենդանական յուղի պակաս հարկադրել են մեր նախնիներին դանել կենդանական յուղի օժանդակներ։

Ձիթհանի գլխավոր կենտրոններից մեկը Բայուն էր։ Դեռ դարեր առաջ Բայուում տարածված է եղել ձիթհանություն, ուստի ժամանակին Բայուն կոչվել է Զիրեան (Զիթյանք, Զիթհանաց շրջան)։ Ձիթհաններ ունեցել են նաև Զարսանջակը, Դերջանը և Քղին։ Ձեթի արտադրության առաջին և գլխավոր յուղահատիկը շուշման էր (սուսամ), որի սահմանափակ մշակումը յուրացվել էր նաև գրանցվող շրջանի հայերի կողմից։

Կատվատի հնդիկից արտադրված ձեթը բոլոր բուսական յուղերից ամենաթանձրը և ամենապրամորն էր։ Բոլման, ձնշման, ճմլումի և թորման գործողությունները կատարվում էին այնպես, ինչպես շուշմայինը, չնաննինը և այլն։ Ձեթը շատ ուժեղ լինելով, ուտելու համար պիտանի չէր, չէին օգտագործում անային խմորեղեններ կամ հաշը պատրաստելիս։ Կատվատի հնդյուղը (թանձր ձեթը) առավելապես օգտագործում էին կանթեղներ վառելու, սայլի անվատամները և սանին յուղելու, փայտերը և տախտակները օձելով փտելու դեմ պաշտպանելու և նման կարիքների համար։

Եվ սակայն կատվատահնդի առավելությունը ձեթից ավելի իր բուժիչ հատկություններ պետք է վերագրել, ժողովրդական բուժողների կարգին հատվածը իր պատվավոր տեղն ուներ։

Մեծված ու բամված ձեթի մնացորդ խյուսը՝ կովատուր (կոպատուն) օգտակար անասնակեր էր նկատվում եղջերավոր անասունների, ի մասնավորի գոմեշների համար։ Տալիս էին հարդի հետ խառը։ Գոմշամարաների համար պահված գոմեշները բնդհանրապես սնուցում էին կովատունով, որով կերակրված անասունների աչքերի սպիտակուցները արյունակալում և անասունները դալկանում էին։ Դրանցից շատ կային Եփրատի ու Արածանիի ափամոտներում, ի մասնավորի Դերջանում։

Ստորև ներկայացվում է այդ Դերջանի շրջանի Վիժան հայաբնակ գյուղի Պուլիկ քեհիայի ձիթհանի նկարագրությունը։

1910 թ. Վիժանում գործող այս ձիթհանը օգտագործվում էր այդ և հարակից գյուղերի կողմից, ոչ որպես հանրային սեփականություն, այլ որպես Պուլիկ քեհիայի պապենական ժառանգություն և այդ բազմանդամ տոհմի ընտանեկան սեփականություն։

Ձիթհանի շենքի մուտքի ճակատին, երկու մետրը երկարություն և մի մետր բարձրություն ունեցող մոխրագույն սրբատաշ քարի վրա, ծաղկաղարդ լայն շրջանակի մեջ արձանագրված էր.

Զկամոքն Աստ-ոյ եւ զխնդրանոքն
Առաքելի որդի Մեսրոպա
Ի տանն Մելիք Ավագա
Շինեսցի զձեթ տունն զայս
Ի համին ՆՂ

Տոնիկ Բալվեցի

1046 թվականին կառուցված ձիթհանը անվթար մնացել էր մինչև 1910 թվականը։

Պատերի լայնքը մի մետրից ավելի բերդանման այս շենքի կառույցին գործածել էին մետրից ոչ պակաս մոխրագույն քարեր։ Քարերն իրար փակչած էին լոկ կամ լոկու կոչված մածուցիկ մի շաղախով, որն իբր թե պատրաստվել է կրի, մազի և ձվի խառնուրդից և դարերի ընթացքում այնքան ամրացել-պնդացել, որ քարից ավելի կարծր էր, ավելի ճիշտ՝ քարն ու շաղախը միաձուլվել և համազանգված էին դարձել։ Գրկաչափ հաստ դերաններր բովված յուղահատիկների շոգիից ծռթել, թրծվել, սևացել էին, բայց փտելու նշաններ ցույց չէին տալիս։

Իր միջավայրի համար այս համբավավոր ձիթհանը շատերի հետաքրքրությունն է շարժել, ինչպես իր հասակակից և դրացի Զորսիի խանը, որը ճարտարապետական մեծ նշանակություն ուներ և որն իր մեծությամբ և կառույցով հավանաբար նմանը չուներ Խարբերդից Կարին խճուղու վրա գոյություն ունեցող իջևանատների մեջ։

Ձիթհանն ուներ հետևյալ չափերը։ Արտաքին պատերի լայնությունը (ըստ գծագրի, 1—1) հավասար էր 13,5 մետրի, (2—2) երկարությունը՝ 16 մետրի, (3—3) պատերի կառույցի հաստությունը՝ 1,2 մետրի, (4—4) ներքին բաժանման կես պատերի հաստությունը՝ 0,5 մետրի, (5—5) լծակի տեղ գործածված զույգ գերանների երկարությունը՝ 12 մետրի, որոնց ամեն մեկ շրջագծի հաստությունը՝ 1,3 մետրի, իսկ հեռավորությունը միմյանցից՝ 0,4 մետրի, (6—6) լծակի տեղ օգտագործված երկու գերանների վրա ամրացված էր համանման երկու գերան, որոնց երկարությունը վեց մետր էր, հաստությունը՝ համաչափ լծակի զույգ գերաններին (7—7) լծակների գերաններին իրար կապող չորս բարձիկների երկարությունը՝ մեկ մետրի, լայնքը՝ 0,4 մետրի, հաստությունը՝ 0,5 մետրի, (8—8) պատի մեջ բացված այն մասը, որտեղ գերանների գլուխներն էին տեղավորված և ճնշման ժամանակ հենակի դեր էին կատարում, ունեին երկու մետր բարձրություն, լայնքը՝ 1—2 մետր, խորությունը՝ 0,8 մետր։

Նույն բացվածքի ստորոտում, լծակների դեպի բացվածքը երկարող մասում քարափոր ավազանն էր, որի լայնքի երկարությունը պատի բացվածքի լայնությունն ուներ, լայնքը՝ նույն բացվածքի խորությունը՝ 0,4 մետր—1,2—0,8—0,4 տրամագծին։

Վիմափոր ավազանին զուգահեռ, դրանից ավելի բարձր լծակի դեր կատարող գերանների տակ շինված էր կոնաձև սալահատակված մի ընդունարան, որի վրա իրարից տասը սմ հեռավորությամբ դրված էին 1,3 մետր երկարությամբ, 0,5 մ հաստությամբ ու նույնքան լայնությամբ փայտե փոքր կոճեր, ավելի ճիշտ՝ գերաններ, որոնց վրա շարում էին բովված, ճմլված և հատուկ մագից պատրաստված պարկերի մեջ դրված ձեթ հանվելիք հատիկը կամ պտուղը և լծակների օգնությամբ ճնշում այն։ Այդ ճմլումից քամվող ձեթը սալահատակված կոնաձև երթուղով հոսում էր վիմափոր ավազանը։ Ավազանում իրար վրա դարսված պարկերի պարունակությունը մեկ սոմառ էր, այսինքն՝ 16 կոտ, կամ 16×12—192 հոխա, որն իր կարգին հավասար էր 256 կգ.։

9—9-ը ցույց է տալիս այն երկու բարձիկները, որ «արջուկ» էին կոչվում։ Արջուկներից մեկը լծակ գերանների տակից ամրացված էր այնպիսի դիրքով, որ առաստաղից մինչև գետին ուղղահայաց պտուտակավոր դերանը (որի մեկ ծայրը ամրացված էր առաստաղի գերանին, իսկ մյուսը արջուկների պտուտակավոր ծակերին) մտնում էր ուղիղ դրված դարձնող երկանքաքարի մեջ, ուր ամրացված էր։

Արջուկների դերը քարը պտտեցնելիս (երբ պտուտակավոր դերանը, որին պողոսակ էին ասում, դեպի աջ էր դառնում) լծակները վեր բարձրացնելն էր, իսկ եթե ձախ էին դարձնում, նույն արջուկների օգնությամբ լծակները վար էին իջնում և զորավոր ճնշում առաջացնում։

10—10-ը՝ վեց մետր երկարությամբ, 0,4 մ հաստությամբ պտուտակավոր այն գերանն էր, որ





Նկ. 8. Զիթ։ան։

արջուկների օգնությամբ բարը դարձնելու ուղղությամբ լծակնեբ՝ վեր էր բարձրացնում կամ վար իջեցնում։ Այս գերանը բացառապես սև կաղնի փայտից էին շինում։

11—11-ն այն երկանքաքարն էր, որի մեջ ամրացված էր պտուտակավոր գերանը և որը շարժիչի գեր էր կատարում։ Քարը զետեղված էր գետնից 0,8 մետր բարձր, որի միջից անցնող պտուտակավոր գերանի պողոսակի սայրին մասը՝ կրունկը. երկաթե գլանի միջոցով դրված էր այդ բարձրությունում ամրացված քարի կենտրոնում զետեղված երկաթե ընդունարանում, որը հնարավորություն էր տալիս պողոսակի օգնությամբ և քարի միջոցով վեր կամ վար շարժել լծակը։

Պտուտակավոր ձողին ամրացված այս երկանքաբարի տրամագիծը 1,2, իսկ հաստությունը 0,6 մետր էր, որը կոչվում էր նուկեկ։

12—12-ը լծակի դեր կատարող գերաններն իրար կապող և գերաններից հեռավորության չափը պահող ավելի փոքր բարձիկներն էին։

Ա. մաս՝ ներքին տարածության չափը 9×12 մետր, ուր զետեղված էին կալը, ճմլիչ քարը, փուորը և դուռը, բարձրությունը՝ 4,5 մետր։

Բ մաս՝ նույն ծակի տակ, բայց առաջին մասից 1,5 մետր խորությամբ, 5×12 տրամագծով, վեց մետր բարձրությամբ կոչվում էր գնդան կամ սրնտուն։

13—13-ը ծեծքարը դարձնող ուղղահայաց լծակի վերի և վարի մասերում ամրացված երկաթե այն ցցերն էին, որոնք դառնում էին վերը, առաստաղի գերանին ամրացված, վարը՝ կալի կենտրոնում զետեղված երկաթե պատվանդանի կլորության մեջ։

14—14-ը ծեծքարը դարձնող ուղղահայաց այն գերանն էր, որի վրա ամրացված էր ծեծքարը և որի բարձրությունը կալի կենտրոնից մինչև առաստաղի գերանը 3,4 մետր էր։

15—15-ը ծեծքար կոչվող երկանքաքարն էր, լծին ամրացնող թրերը, որոնք կենտրոնական լծակի երկու կողմերից խրված էին լծի մեջ։

16-ը երկանքարն էր կամ ծեծքարը. ձիրհանքարը, որը ուղղահայաց կալի մեջ լծակի և լծի օգնությամբ էր դառնում. բարձրությունը (տրամագիծ)՝ 1,7, հաստությունը՝ 0,5 մետր էր։

17-ը կալն էր՝ գետնից մինչև 0,7 մետր բարձրությամբ, աստիճանաբար դեպի կենտրոն թեքվող հաստատուն սրբատաշ քարերից պատրաստված. տրամագիծը՝ 2,8, կլորության շրջագիծը 8,6 մետր էր, ուր լցնում էին բովված յուղահատիկը, որը ծեծվում և մանրացվում էր ծեծքարի միջոցով։

18-ը ուղղահայաց սյան միջից անցնող և ծեծքարին միացված լուծն էր։

19—19-ը լծան սամիները։

20—20-ը փոի վերին մասի շորացման ավազանի դեպի ներս թեքված պռունկները (շրթունքները)։

21-ը՝ փոի վրայի մասում, առանց ծածկի, բովման սալարկված ավազանն էր, երեք մետր երկարությամբ և 2,5 մետր լայնքով, 3—2,5 տրամագծով, 0,4 մ խորությամբ փոի բարձրությունը մինչև վրայի սալարկի հավասարությունը 1,6 մետր էր։

22 և 23-ը փոի վրայի ավազանին կից թաղված ջրամաններն էին, հողե փոքր ըղուղները, ուր ջուրը տաքանում էր, որով թրջում էին կալում ծեծվելիք կամ ճմլվելիք յուղահատիկները. տրամագիծը՝ 0,6, բերանը՝ 0,2, խորությունը՝ 0,8 մ։ Ամեն մի ճոմառի համար օգտագործում էին քառասուն լիտր տաք ջուր։

24 և 25-ը ծեծված, բայց դեռ յուղը չհանված փոխինտի ժամանակավոր ամբարներն էին, որոնք ծառայում էին փոխինտը մալելուն, ծեծված փոխինտի (որին խուլունձկ էին ասում) հավաքման համար։ Երկայնքը՝ 1,5, լայնքը՝ 1,25, խորությունը՝ 0,7 մ։

26-ը նույնպես փոի մոտի ավազանի բարձրության վրա թաղված կամ շինված ավազանն էր, մաղվածի խորշունքը հավաքելու համար։

27-ը փոին կից դրսի դռան մոտ ղոմեշները կամ եղները ջրելու գուռն էր, երկարությունը՝ 2 մետր, լայնությունը՝ 0,8, խորությունը՝ 0,5 մետր, ուր ջուրը տաքանում էր և ծառայում հոգնած անասուններին չափավոր ջերմությամբ ջրելու և ձիթհանում աշխատողներին լվացվելու, նույնիսկ լոգանալու համար։

28-ը մուտքի գուռն էր, լայն և բարձր կույպ դռներից լծկաններով ու սայլով կաբելի էր մտնել ձիթհանի ներսը։

Ինքնագրվող ձիթհանում եզ կամ ձի չէին աշխատեցնում, այլ միայն ղոմեշներ, որոնց օրը երկու անգամ լողացնում էին փոի մոտ գտնված քարե գուռի գոլ ջրով։ Երեկոյան լվանալուց հետո, գոմեշի մարմինը օծում էին ձեթով, իսկ առավոտյան լվանում էին և ձեթը մաքրում։

Առավելապես կովաունով կերակրում էին ձիթհանի քարը պտտեցնող ղոմեշներին, որոնց աչքերը արգելակալում էին, աշխատանքի ժամանակ շուրջը չնայելու և դիխապատյտ չունենալու համար։

Ձեթը քամելուց հետո մնացած խորշուկը (կովաուն) ուժեղ և սննդարար անասնակեր էր։

Ձիթհանման գործողություններ կառավարող կոչվում էր հիրպան։

Ոսկված, հմտված յուղատաքիկ փոքրինաի վերածվելուց հետո, երբ այն լցնում էին սաղմ պարկերի մեջ և դնում էին ձեղնի ծակի տակ դրված կոնների վրա ու երբ պողոսակի և ճախարակի դեր կատարող բարի միջոցով դերանները հնշում էին պարկերին, դերանների մյուս ծայրերը, որ դեռևդված էին պատի մեջ բացված փակ պատուհանում, արջուկների ազդեցությամբ ու պողոսակի միջոցով դեպի վեր բարձրանալով, հասնում էին վերի սասի բարև հենակին և կանգ առնում։ Լծակների հընչմամբ ամենաուժեղ կերպով դերանները դեպի վար էին հրվում, որով դիրքում շարված պարկերից ձեթը բամվում և հոսում էր ձիթավազանը։ Այդ գործողություններ կառավարող վարպետը կոչվում էր ձիթման։

Հնշումը աստիճանաբար ավելացնելով, մեկ օրվա ընթացքում ձեթը բոլորովին բամվում էր և պարկերում մնում էր պնդացած խյուսը՝ կոպտունը։

Այն բանվորը, որը հսկում էր գոմեշի աշխատանքին և ձեռքի կելպերիով հատիկները քաշում բարի տակ ու միշտ խառնում կալը, կոչվում էր եռը։

Ահա մոտավոր բնութագիրը մեր նախնիներից մեզ ավանդ ձգված և նախնական պայմանների տակ մինչև մեր օրերը հասած ձիթհանի։

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Դերսիմն իր լեռնաշխարհով անասնապահական շրջան էր։ Հարուստ արոտատեղիները, անտառածածկ սարերը, հորդառատ գրերը հնարավորություն էին տալիս դարկ տալու անասնապահությանը։ Անասնապահության մեջ հիմնականը խաշնարածությունն էր, խոշոր եղջերավոր անասունները (կով, եզ), համեմատաբար փոքր տոկոս էին կազմում, իսկ գոմեշ բոլորովին չէին պահում։

Խաշնարածությունն էլ առավելապես բրդերի դրադմունքն էր։ Ամեն տնտեսություն, նայած իր ուժերին՝ 50-ից մինչև 500, տեղ-տեղ նույնիսկ ավելի այծ և ոչխար էր պահում։ Թեև հայերից էլ ոմանք պահում էին ոչխարի հոտեր, բայց հովվության պատիվը բրդերին էր վերապահված։

Եթե հայերի գլխավոր զբաղմունքը երկրագործությունն էր, ապա բրդերի գոյության միջոցը խաշնարածությունն էր ապահովում։

Դերսիմի լեռնաշխարհի անասնապահությունը անցնում էր երեք հերթական փուլերից։

Ա. Մսուրային շրջան, որն սկսվում էր նոյեմբերի 1-ին և վերջանում մարտի 31-ին։ Այդ ժամանակաշրջանում (հինգ ամիս) անասունները պատսպարվում և կերակրվում էին ախոռներում ու գոմերում։

Բ. Գարնանը և աշնանը, գյուղերից դուրս, ձորամիջերում աղրլային շրջանն էր, երբ անասունները գիշերում էին հատուկ շրջափակոցներում (աղրլ) և արտատնային կամ արտադյուղային գոմերում, որն ընդգրկում էր ապրիլ, մայիս, ապա՝ հոկտեմբեր ամիսները։

Գ. Ամռանը սարի (յայլա) շրջան, ուր անասունները մնում էին բացօթյա նախիրներում և մակաղատեղիներում։

Սարադնացությունն էլ ուներ իր դասավորումները, այսինքն՝ ամիսը մեկ անգամ փոխել սարատեղը, մի շարք գյուղեր ունեին երեքից-հինգ սարատեղ, որոնք գտնվում էին տարբեր վայրերում։ Կալինատնտեսության ամենաարդյունավետ շրջանը սարային էր, որը տևում էր չորս ամիս՝ հունիսի 1-ից մինչև սեպտեմբերի վերջը։

Հերթական կարգը պահպանելու համար սկսենք դարնան արոտից և վերջացնենք մսուրային շրջանով։

Մարտի քսանից հետո, երբ հողն աղատված էր լինում ձյան ծածկոցից ու սևացած և սկսվում էր ծլարձակումը, դերսիմցին պատրաստվում էր արտադյուղային գոմերի և շրջափակոցների շրջանին։

Մինչև ապրիլի մեկը խոշոր եղջերավոր անասունները խամից հանում, ոչխարն ու այծը կարճ արշավնիրով արոտի էին տանում, դես ու դեն մաս ածում ու երեկոյան վերադարձնում դյուղի գոմերը, իսկ ապրիլի մեկին արդեն արտադյուղային գոմերում և աղրլներում ծխում էր ավանդական օջախը, որը վառելու կրակը գյուղի տան անմար օջախից էին բերում։

Մինը, որ սկսվել էր դյուղական գոմերում, շարունակվում էր արտադյուղային կիսաամառանոցներում, ծնում էին դաշտում, հանդում, սարում և աղրլներում։

Անասնապահը դեռ աշնանը նկատի էր ունեցել ձիրը անվնաս անցկացնելու անհրաժեշտ պարագաները ու եթե գյուղի մարագներում խնամքով տեղավորել էր ձմռան հինգ ամսվա անասնակերը, չէր մոռացել նաև արտադյուղային գոմերի ծնի շրջանը, դոնե մինչև մայիսի մեկը։

Հովվի մասնագիտությունն էր՝ հասկանալ, թե ոչխարը կամ այծը երբ է ծնելու. նա ճանաչում էր նույնիսկ երկվորյակ ծնող մարին կամ այծը և ըստ այնմ միջոցներ ձեռք առնում նրանց կերի, հսկո-

9—61